№ 239 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3

1905

ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3 № 239

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Միքայէլ Հայրապետեան, Թէկլի Սարգսեան, Արսէն և Եփրեմ Գրիգորեան Միրզայեանցները յայտնում են ազգականներին և ծանօթներին առաջնի քրոջ, երկրորդի տալոջ և վերջինների հօրաքրոջ՝

ՀՌԻՓՍԻՄԷ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ՏԷՐ-ԳԱՍՊԱՐԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ ներկայ դեկտեմբերի 1-ին, ժամը 5-ին, բժիշկ Արսէն Միրզայեանի բնակարանում Վօկզալեան հրապարակի վրա № 10։ Յուղարկաւորութիւնը տեղի ունի այսօր, շաբաթ, դեկտեմբերի 3-ին հանգուցեալի բնակարանից դէպի Խոջիվանքի եկեղեցին ուր և կը կատարվի թաղումը։ 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ խնդրում է Թիֆլիս քաղաքի բոլոր տանտէրերին ուղարկել իրանց ներկայացուցիչներին՝ ամեն մի մասի կողմից 10 հոգի, մասնակցելու համար քաղաքային վարչութեան հետ միասին քաղաքային ինքնապաշտպանութեան ծրագրի մշակման։ Նիստը նշանակված է Դումայի դահլիճում կիրակի, դեկտեմբերի 4-ին, առաւօտեան ժամը 11-ին։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տագնապալի արձագանքներ. Վերջին տեղեկութիւններ. Տեղեկութիւններ գաւառից.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Մամուլ. Ազատութեան մի համեստ զինւորի թաղումը. Գանձակի թռուցիկները։ Գանձակի գաւառի դէպքերը։ Գանձակի դէպքերը։ Քաղաքի ազգաբնակութեան։ Ինչ անենք. Զուշանանք։ Խայտառակութիւն զինւորական դատարանի դրօշակի տակ. Երկրորդ Սեվաստոպոլը. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պետութիւնները գործում են Թիւրքիայի դէմ. Արտաքին լուրեր.—Յայտարարութիւններ։

ՏԱԳՆԱՊԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Թիֆլիսում հաշտութիւն կայացաւ, հայ և թուրք կռւողները թողին իրանց դիրքերը և սկսվեց սովորական կեանքը։

Եւ ի հարկէ իւրաքանչիւրի ցանկութիւնն է, որ խաղաղութիւնը լինի մշտական և երբեք չը խախտվի։

Բայց կարևոր է, որ հիմնաւոր և մնայուն խաղաղութիւն հաստատվի նաև մեր երկրի միւս մասերում՝ Բագւում, Գանձակում, Շուշում, Երևանում, Նախիջևանում և միւս տեղերում։

Դժբաղդաբար՝ գաւառներից մեզ հասած թէ հեռագրական և թէ ուրիշ ձևով ստացված լուրերը պարունակում են յուզիչ տեղեկութիւններ։ Թուրքեր և հայեր ընդհարվում են միմեանց հետ շատ տեղերում։ Ամբողջ գաւառներ «պատերազմական» դրութեան մէջ են։

Աւերը, կողոպուտը, հրդեհը շարունակում են լափել և ոչնչացնել տարիներով կազմակերպված տնտեսութիւնները և հաւաքած հարստութիւնները։ Այդպէս խորտակվել են, օրինակ Լօռու գաւառամասում կաթնարաններ և պանրագործարաններ, որոնց հիմնելու և կարգաւորելու համար գործ են դրվել մեծ տեխնիկական ջանքեր և դրամական մեծ միջոցներ։

Ահագին է և չափազանց ահագին այն վնասը, որ ստանում է մեր երկիրը բարբարոսական այն ասպատակութիւններից և աւերումներից, որոնք ալիքաման տարածվում են կենտրոնական կէտերից դէպի երկրի խորքերը։

Եթէ կենտրոնական տեղերում դեռ կարող է զօրքը մի որ և է օգնութիւն հասցնել տառապող ժողովրդին, նա բոլորովին անզօր է մի որ և էական գործ կատարելու հեռու և խուլ անկիւններում։ Բնականաբար ժողովուրդը դիմում է ինքնապաշտպանութեան միջոցներին, բայց ինքնապաշտպանութիւնը ամեն տեղ դեռ կազմակերպված չէ։

Մեր ժողովուրդը չէր ենթադրել, թէ նա մի օր թողված կը լինի ինքը իր վիճակին և իրան վրա ծանրացած կը լինի հրոսակների յետ մղելու հոգսը ու ծանրութիւնը։

Մեր երկրի վարչական անցեալը միշտ թելադրել և կրկնել էր. մի բան. թէ ապահովութեան վերաբերեալ ամեն մի հոգատարութիւն վերցրել է իր վրա կառավարութիւնը, ուստի և ոչ ոք ինքը չը պէտք է խառնվի այդ գործի մէջ։

Եւ թէև մեր անցեալը ազգաբնակութեան ապահովութեան վերաբերութեամբ ամենևին կատարեալ և անթերի չէր, թէև աւազակութիւններ և մասնաւոր կողոպուտներ տեղի էին ունենում, այնուամենայնիւ այդ անցեալը դրական արտայայտութիւններ էլ ունէր։ Յարձակվողները այնքան յանդուգն չէին լինում, ինչպէս այժմ և վախենում էին պատասխանատուութիւնից և պատժից։

Իսկ այժմ յարձակվողները բոլորովին ապահով են իրանց արարքների վերաբերութեամբ։ Նրանք հաւատացած են, որ ներկայ տրամադրութեան տէրերն են, որ նրանք նպաստում են մի ինչ որ քաղաքականութեան, և որ նրանք կը մնան բոլորովին անպատիժ։

Հասկանալի է, որ գաւառացի հայ ժողովուրդը, տեսնելով այդ ամենը, այլ ևս յոյս չէ դնում զօրքի ու ոստիկանութեան վրա և դիմում է յուսահատական որոշումների կամ թողնում է իր բնակութեան տեղը փախչում, կամ վճռում է դիմադրել, որքան կարող է և կամ անզէն ու անպաշտպան յանձնում է իրան նախախնամութեան կամքին և դառնում է ասպատակութիւնների ու աւերումների զոհ։

Հասկանալի է, նոյնպէս, որ մի Թիֆլիս քաղաքի հանգստանալը դեռ հանգստութիւն չէ բերում մեր երկրին, որ կործանման ճանապարհի վրա է։ Անհրաժեշտ է, որ ամբողջ երկիրը խաղաղվի, և իր սովորական կենցաղավարութիւնը վերականգնէ։

Իսկ այդպիսի մի խաղաղութիւն հաստատելու համար բաւական չէ թիֆլիսցիների հաշտութիւնը։ Անհրաժեշտ է, որ մեր երկրի կռւող կողմերի, հայերի և թուրքերի ներկայացուցիչները զանազան տեղերից հաւաքվէին մի կենտրոնական համագումար ժողովի և այնտեղ հիմնաւորապէս քննէին տարաձայնութիւնների կէտերը, մաքրէին բոլոր թիւրիմացութիւնները և հաստատէին ամուր հաշտութիւն ամբողջ երկրում ապրող հայերի և թուրքերի համար։

Ահա այդ առաջարկն է, որ իբրև մի հիմնական կէտ քննվեց Թիֆլիսի հայ ու թուրքական հաշտարար խորհրդակցութեան մէջ և ընդունվեց երկու կողմերից ևս։

Պէտք է ցանկալ, որ այդ ժողովը կարելին չափ շուտ գումարվի և շուտ վերջ դնի մեր անվերջ աղէտներին։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուշուց դեկտեմբերի 1-ից, մեզ հեռագրում են. «Ի նկատի ունենալով կրիտիքական մոմենտը, խնդրում եմ ձեր աջակցութիւնը, որպէս զի շուտափոյթ գոհացում տրվի այն խնդրքին, որ բացատրված է նոյեմբերի 28-ին Փոխարքային ուղղված հեռագրի մէջ և որի բովանդակութիւնը հետևեալն է։

Ուրբաթ, երկու կողմի հոգևորականութեան հանդիսաւոր թափօրից և ջերմ ճառերից յետոյ ի նպաստ խաղաղութեան վերջնական հաստատման, տեղի ունեցան վրդովեցուցիչ պրօվօկացիաներ մահմեդականների կողմից։ Շաբաթ օրը վիրաւորեցին մի հայ հովւի քաղաքի ծայրում քշելով նրա հօտը, իսկ երէկ քաղաքի պատերի մօտ սպանեցին մի հայի՝ կտրելով նրա քիթը և ականջները, ապա յափշտակեցին երկու ընկերներին, որոնք երևի նոյն վիճակին ենթարկվեցին։ Այդպիսի երևոյթները կրկնվում են իւրաքանչիւր օր, գնալով աճում են և սաստիկ գրգռում են հայերին, որոնք սակայն զինավերլով համբերութեամբ, զսպում են իրանց։ Գաւառում խմբական յարձակումներ են տեղի ունենում Դօլանլար, Խրաւշուրտ, Խանաբաղ և այլ հայ գիւղերի վրա։ Ամբողջ գիւղերում մահմեդականները փակել են պօստային տրակտները։ Քաղաք բերվելիք ապրանքները արդէն վեցերորդ օրն է դարսված են ճանապարհի վրա։ Արդէն վեցերորդ օրն է կենսական ամենաանհրաժեշտ պիտոյքները քաղաք չեն բերվում. պաշարները սպառված են։ Բօյկօտը օգոստոսի 16-ից մահմեդականները խստութեամբ պահպանում են։ Սպառնում է սով, ցուրտ, հիւանդութիւններ, չը խօսելով արդէն այն սարսափելի յուզման մասին, որ իւրաքանչիւր րոպէ կարող է կոտորածի և հրդեհների փոխարկվել։ Կրկին աղաչում եմ ձեր պայծառափայլութիւնից շուտով ուղարկել քաղաք հետևակ զօրք և արտիլերիա անխուսափելի ընդհարման առաջն առնելու և հասարակութիւնը վերջնական կոտորածից ազատելու համար։ Մի և նոյն ժամանակ խոնարհաբար խնդրում եմ կարգադրութիւն անել հանգստացնելու դժբաղդ գաւառը և ազատ երթևեկութիւն վերականգնելու տրակտի վրա, մաքրելով մարդասպանների և կողոպտիչների հրոսակներից։

Աշոտ եպիսկոպոս

—

Աղստաֆա, 1 դեկտեմբերի, 7 ժամ 30 ր. առաւօտեան, վարչութեան գլխաւոր Սօլօվեօվին.

Ներկայ դեկտեմբերի 1-ին Աղստաֆա կայարանում հաւաքված թուրքերին, որոնց մէջ կային և շատերը շրջակայ գիւղերից, ես աշխատում էի պարզել նրանց տրամադրութիւնը և թարգմանի միջոցով իմացայ, որ թուրքերին շատ լաւ յայտնի է, որ Թիֆլիս-Ալեքսանդրօպօլ-Կարս-Երևանեան գծի վրա հայերը գնացքներում խուզարկում են թուրքերին։

Թուրքերը սաստիկ վրդովված են այդ հանգամանքից և պահանջում են, որ նրանց իրաւունք տրվի հայերի խուզարկութիւնը կատարել Աղստաֆա կայարանում ժանդարմների ներկայութեամբ։ Խնդրում եմ նոյնպէս թոյլատրել յետ ուղարկելու Թիֆլիս այն բոլոր ապրանքները, որոնք գտնվում են կայարանի փակված խանութում և պատկանում են ճանապարհ ընկած հայերին, որովհետև այդ ապրանքները մեծ հրապոյր են ներկայացնում թուրքերի համար և այն ոյժով, որ իմ տրամադրութեան տակ է գտնվում, այն է երեսուն և հինգ զինւոր, ես չեմ կարող պաշտպանել կայարանի ծառայողների գոյքը և կեանքը, նոյնպէս և երկու հարիւր վագոնի չափ ապրանքների կողոպուտի առաջն առնելը։

Պօդպօրուչիկ Զուտին

—

Սօղանլուղ, 1 նոյեմբ. 10 ժ. 40 ր. առաւօտ.

«Հրամանատար Բէրէն զեկուցեց ինձ, որ նոյեմբերի 30-ին, առաւօտեան 10 ժամին Սօղանլուղ կայարանում չարագործ թուրքերի ամբոխը մօտենալով կայարանին, պահապանների հարցին, թէ ովքեր են, կրակ բացին հրացաններից պահապանների վրա։ Պօդպօրուչիկ Պօպօվ դուրս բերեց կէս վաշտ զօրք, տուեց երկու զալպ։ Թուրքերը փախան, թողնելով հինգ տապրակ կողոպտած ապրանք։ Մեզանից վիրաւորվածներ և սպանվածներ չը կան։

Պաշտպանութեան հրամանատար պօդպօրուչիկ Սելեզնեւ

—

Ջալալօղլի շրջանից եկած մի անձ մտնելով խմբագրատուն, պատմեց մեզ հետևեալը։

Թուրքերը յարձակվեցին Գէորգ Շաքինեանի պանրագործարանի վրա, որ գտնվում է Ղարախաչում և հիմնայատակ արին նրան։ Ամբողջ շինութիւնը իր բոլոր պաշարներով կրակի կերակուր դարձաւ։ Թուրքերը տարել են մօտ 400 գլուխ տաւար, մինչև 2000 պուդ շվէյցարական պանիր և զանազան տեսակ գործիքներ ու իրեղէններ. կողոպտած պանիրը թուրքերը ծախում են շրջակայքում պուդը 1—2 րուբլիով։ Վնասի քանակութիւնը հասնում է 80-000 րուբլու։ Գործարանի ծառայողները բոլորը փախել են և պատսպարվել են Ուղէլի կառավարութեան պաշտօնեաների մօտ։

Միևնոյն աղէտին ենթարկվել են Քալանթարեանի, Օպօչինինի (որի կառավարողն է Յակոբեան) և Գրաքի ու մի քանի շվէյցարացիների կալուածքները։ Առաջին երկուսի գործարանները այրված են, իսկ միւսներից տարել են նրանց գոյքի մի մասը։

Դրութիւնը շատ ծանր և յուսահատական է։ Թուրքերը առաջ են շարժվում և ներկայումս պաշարել են միւս գործարանները։

Կառավարութեան կողմից ոչ մի օգնութիւն չէ հասցրված պանրագործներին։ Տեղական պրիստաւը միայն արձանագրել է իրողութիւնը։

—

Թաուզ, նոյեմբ. 30, 4 ժ. 50 ր. երեկ.

Զինւորական շտաբին.

Թուրքերը յայտարարեցին, թէ հայերին պատկանող քառասուն վագոն գարին իրանցն է. պահանջում են, որ զինւորները և ոստիկանութիւնը չարգելեն տանել այդ գարին։ Զինւորները, ոստիկանները սակաւաթիւ են, պաշտպանելու ոյժ չը կայ։ Խնդրում ենք օգնութիւն ուղարկել։ Պատրաստվող յանդուգն թալանը սարսափ է ազդում ծառայողներին, որոնք սպառնում են փախչել։ Դրագունները ապահովել խաղաղութիւնը չեն կարող։ Գետաբեկը, ութսուն վերստ հեռու, (?) ապրանքների պահեստը թուրքերը փորձեցին թալանել, լսելով հրացանը ծառայողների պաշտպանութեան աւազբանուրից. սարսափահար փախչել են ուզում։

Ի տեղի կայարանի գլխաւոր՝ Տօկմաչև, Թաուզ կայարանի ծառայողներ, պաշտպանութեան պետ պրապօրշչիկ Կումկուգա, հաշտարար միջնորդ դոկտ. պետ Պետրով։

—

Թաուզ, 30 նոյեմբերի։

«Թիֆլիս, Զինւորական շրջանի շտաբը. «Շնորհիւ մի քանի մարդկանց, անդադար գրգռում են գցում ժողովրդի մէջ՝ թուրքերը անզուսպ կերպով վճռել են թալանել հայերի ունեցուածքը. սպառնում են վաղը հայերին կոտորել։ Անհրաժեշտ է զինւորական ոյժ։ Խնդրում ենք օգնութիւն, այլապէս ներկայ անվերջ կրկնվող աւազակութիւնները առիթ կը տան ապագայում նորից կոտորած սկսելու։ Անձամբ յետ եմ պահում խառնակութիւններից ժողովրդի մի փոքր մասը։ Գրգռման առաջն առնել անզօր եմ»։

Սուլթանով

—

Աղստաֆայից դեկտեմբերի 1-ին։

«Թիֆլիսի պօստ-հեռագրական շրջանի պետին.—Հայ խանութները ամբողջովին կողոպտվեցին։ Թուրքերը սպառնում են այրել կայարանի շինութիւնը և ինձ էլ համարելով հայ, սպառնում են սպանել. պաշտօնեաները ապաստան են գտել երկաթուղու ծառայողների մօտ, փախել են բոլոր կառապանները, ստարօստաները, մնացել է մի հատ կառապան թուրք, 7 ձի և երկու կառապաններ, որոնք ուղևորներ էին տարել, չեն վերադարձել. ասում են տրօյկան և ձիերը տարել են դաղբէսամանցիները. հարկաւոր է զինւորական օգնութիւն։

Դիլբազով

—

Դալեար, 30 նոյեմբերի։

«Զգուշացրեք հայ ուղևորներին չը գալ ուղևորական գնացքով, որովհետև թուրքերը ուզում են կանգնեցնել բոլոր գնացքները և սպանել բոլոր հայերին»։

—

Դալեար, 30 նոյեմբերի։

«Ջեադամ, կապիտան Գեվէկելին։ Կայարանում ունենք միայն 9 մարդ պահպանութեան համար. կայարանի շուրջը սաստիկ հրաձգութիւն է. խնդրեմ ուժեղացնել պահակախումբը. բոլոր ծառայողները վախի մէջ են գտնվում։ Բալադին»։

—

Կվիրիլ, 1 դեկտեմբերի, 12 ժամին կէսօրից յետոյ։ Փոխարքայ կոմս Վօրօնցօվ-Դաշկովին.

«Նոյեմբերի 28-ին Բաթումում կազակները կատարեցին խաղաղ բնակիչների մի անմիտ և վայրենի կոտորած։ Նոյեմբերի 30-ին նրանք բացին հրացանաձգութիւն խաղաղ բնակիչների վրա, որի հետևանքն այն եղաւ, որ բարրիկադներ սկսեցին շինել ամբողջ քաղաքում, Բաթումի ամբողջ ազգաբնակութիւնը, մեծից մինչև փոքրը, գտնվում է յուզված դրութեան մէջ և իւրաքանչիւր րոպէ պէտք է սպասել նորանոր ընդհարումների. իսկ այդ ժամանակամիջոցում, որպէս մեզ յայտնի է, Օզուրգէթից ուղարկում են Բաթումի վրա պլաստուններին։ Այդ հանգամանքը աւելի ևս վառացնում է դրութիւնը և բարդութիւններ է առաջացնում։ Անթիւ ընդհարումներից խուսափելու համար մենք պահանջում ենք, որ անյապաղ դադարեցնվի պլաստունների շարժումը դէպի Բաթում, քանի որ չէ անցել յուզված տրամադրութիւնը. հակառակ դէպքում կորական միջոցներ ձեռք կառնվեն նրանց կանգնեցնելու համար։

Ռուսաց սօցիալ-դէմօկրատական բանւորական կուսակցութեան Բաթումի, Գուրիայի և Քութայիսի կոմիտեաներ։

—

Կվիրիլ, 1 դեկտեմբերի, Ստարօսէլսկուն, Թիֆլիսում։

Պատուիրակային գնացքով եկած Գուրիայի և Բաթումի պատգամաւորները հաղորդում են, որ նաւակինցիները եկան Նոտանեբի պլաստուններին փոխարինելու համար, որոնք գնում են Բաթում ուժեղացնելու բերդապահ զօրքը, որպէս զի արիւնհեղութիւն և ընդհարում չը լինի զօրքերի հետ։

Պատգամաւորները խնդրում են ձեր միջնորդութիւնը Փոխարքայի առաջ պահել ժամանակաւորապէս պլաստուններին։ Քութայիսում հանգիստ է։

Կիպիանի

—

Նովօսէնակից հեռագրում են դեկտեմբերի 1-ից. «Առաւօտեան 10 ժամին անյայտ չարագործներ սպանեցին Նովօսէնակի ոստիկանութեան վարչութեան քարտուղար Կօրիցկուն։

—

Թիֆլիսի Բոտանիքական փողոցի բնակիչ Յովհաննէս Տէր-Աւետիսեան հաղորդում է մեզ հետևեալը։ Հայ-թուրքական ընդհարումների սկսվելու օրից մենք տեղափոխվեցինք ապահովութեան համար դէպի Վերայի մասը։ Նոյեմբերի 28-ին, թէ իմ և թէ իմ հարևաններ Սարգիս Համզեանի, Աղաջան Խանախանեանի, Բեգլար Սահակեանի, Եղիսաբէթ Գեօրգեանի, Արշակ Միխայլեանի, Կատարինէ Մամաջանեանի, Ներսէս Շերմազանեանի և ուրիշների տները ենթարկվել են աւերի և կողոպուտի։ Տարել են տներից բոլոր գոյքը, իսկ ինչ որ չեն կարողացել տանել, ջարդել են։ Հանել տարել են նոյն իսկ լուսամուտներ և ամեն բան, ինչ որ կարելի էր տանել։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Հաղբութ. (Զիբրայիլի գաւառ), նոյեմ. 12-ին։ Տարիներից ի վեր մեր գաւառում թուրքերից բօժօժ գնող հայ վաճառականները թուրք գիւղերում տներ են վարձում, տալիս են այդ տանտէրերին հազարներով փող բօժօժ գնելու համար և հաւատացած նրանց, այդ տեղերում միայն մշակներ թողնելով՝ իրանք 3—4 ամսից յետոյ են գալիս հաշիւները տեսնելու և վերջ տալու։

Մինչև այս տարի թուրքերը կամ չէին ցանկանում կամ չէին կարողանում ի չարը գործ դնել հայ վաճառականի դէպի իրանց տածած հաւատը։ Սակայն այս տարի ուրիշ կերպ եղաւ։ Իւրաքանչիւր թուրք տանտէր կարծես իր սուրբ պատկանութիւնն էր համարել հայի պահ տուած ապրանքից մի մասը սեփականացնել։ Այդպիսիների մէջ եղել են տարբեր ախորժակի տէր մարդիկ. մի քանիսը գողացել են պահ տուած ապրանքի 30%, միւսները 10%, կան և այնպիսիները, որ 20% են գողացել։ Այդ ամենը կատարել են առանց խղճահարվելու, մինչդեռ հարիւրաւոր հայերից ոչ մէկի մտքումն անգամ չէ անց կացել իրանց պահ տուած թուրք հարևանի ալրուխից (թուրքերը սար բարձրանալիս իրանց ծանրութիւնները պահ են տալիս հայերի տներում, և դրանց այստեղ ալրուխ են ասում) մի ասեղ անգամ յետ քաշել, բոլորը երեսի ջրովը տուել են տէրերին։ Բոլոր գողացած բօժօժների համար գանգատներ են տուել գեն. Տակայշվիլուն, մի քանիսի համար պաշտօնական արձանագրութիւններ են կազմված։

Այդ ամենը կատարվել է մինչև հոկտեմբերի 16-ը, երբ նահանգապետ Տակայշվիլու Փոխարքային ուղարկած հեռագրի համաձայն, իր «առաջուց ձեռք առած միջոցներով գաւառում հանգստութիւն էր»... երբ «հայ հրոսակախումբը, բաղկացած գլխաւորապէս եկւորներից և զանազան տեղերի գասալիք զինւորներից, դեռ չէր անցել Զանգեզուրի գաւառից Կարեագինի գաւառը և չէր ստիպել այդ տեղի լեռնական գիւղերի—Ծամծոր, Դաղբաշի, Ջիլան և այլն—բնակիչների մի մասին միանալ իր հետ և յարձակվել թուրքական Թաթարլու և Ալմալիքլու գիւղերի վրա և սպանել 8 հոգի թուրքեր»։ Երբ այդ պատճառով դեռ ևս «սաստիկ գրգիռ չէր առաջացել Կարեագինի գաւառի թուրքերի մէջ»։

Այդ ամենը կատարվել է, ինչպէս վերը յիշեցի, մինչև հոկտեմբերի 16-ը, մինչև հայ հրոսակախմբի Կարեագինի գաւառը մտնելը։ Եթէ խիղճերս մի կողմ թողնելով՝ մոռացութեան տանք հազարաւոր թուրք խուժանի յարձակումը Դօլանլարի, Ցորի, Բիւրաթաղի վրա, Խուրմանջուղի և Ղուշչիլարի քարուքանդ անելը թուրք խուժանի ձեռքով, խծաբերդցի անմեղ տասարածների մորթոտելն ու դիակները այլանդակելը և շատ մենաւոր սպանութիւններ, կողոպուտներ և նման դէպքեր, այն ժամանակ միայն կարելի է ասել, ինչպէս ասում է գեներալ Տակայշվիլին. «առաջուց ձեռք առած միջոցներով գաւառում հանգստութիւն էր մինչև հոկտեմբերի 16-ը»...

Գեներալի ձեռք առած միջոցներից մէկը հետևեալն է. նա լիազօրութիւններ է տուել Հիւսէյին աղա Ջիւանշիրին գաւառը խաղաղ պահելու համար. իսկ նա արել է այն, ինչ որ կարող է անել մի Հիւսէյին աղա։ Հիւսէյին աղայի լիազօրութիւններ ստանալու լուրը հասել էր թէ թուրք և թէ հայ ազգաբնակութեան ականջին։ Թէ ինչպէս էր հասկացել թուրքը այդ «խաղաղութիւնը» կարելի է գաղափար կազմել հետևեալ դէպքից։ Մի օր Հիւսէյին աղայի տունը մտնում է մի սէյիդ և սկսում է իր բարեմաղթութիւնները այսպէս. «Շնորհաւորում եմ ձեզ արդարադատ Աստուծու ձեզ շնորհած իրաւունքների համար։ Վերջապէս հասաւ ցանկալի ժամը, երբ դուք ձեր նախորդ Ջաֆարղուլի խանի նման կը կառավարէք մուսուլման ժողովուրդը»։ Այդ տեղում սէյիդին հասկացնում են, որ ճառը չը շարունակէ, որովհետև մի հայ է լինում ներկայ։

Հիւսէյին աղայի «խաղաղարար» միջոցներից մէկը առ այժմ չը յիշենք -թակով, մահակով զէնք առնել տալը։ Միւլքդարի կուտում անյաջողութեան հանդիպելով, մի թուրք շտապում է «խաղաղարար» Հիւսէյին աղայի մօտ՝ լուր բերելով, որ հայերը իրանց զօռ արին։ Աղան յանդիմանում է նրան ասելով։

— Ա՛յ, կոտորվէք դուք, որտեղ ուղարկում եմ ձեզ, ջարդված էք գալիս...

— Աղա, գլխիդ, արևիդ մատաղ, պատասխանում է լրաբեր թուրքը, վալլահ, բիլլահ. անհաւատ խումբերին (թուրքերը ամեն մի զէնքը ձեռքին հայի «խումբ» են ասում) գնդակ չէ ծակում, իսկ նրանց հրացանները կարծես աշղ Պետրոսի բալաբանը լինի թմբկահարելիս։

Այսպիսի «խաղաղարար գլխաւոր» ունենալուց յետոյ, գեներալ Տակայշվիլին դեռ կարծում է, թէ «խռովարարներ ուրիշ տեղերից պիտի գան։»

Որպիսի համոզմունք կամ համոզմունքի ձևացում։

Լ. Հայրապետեան.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Ամեն տեղ քարոզվում է յեղափոխութեան շարունակութիւն։ Ժողովուրդը կանչվում է զէնքի։ Զինված ապստամբութիւն՝ դեմօկրատական հանրապետութիւն հաստատելու համար—ահա ինչ է քարոզվում ոչ միայն բազմաթիւ միտինգներում, այլ և սօցիալիստական մամուլի մէջ։ Բայց որքան իրական ոյժ կայ ժողովրդական ապստամբութեան մէջ։ Կարող է այդ ապստամբութիւնը աջողութիւն գտնել։ Այս մասին առհասարակ չեն խօսում յեղափոխական կոչերը։ Նրանք միայն այս գիտեն, որ եթէ ժողովուրդը զէնքը ձեռքին ապստամբվի, նրա յաղթութիւնը կատարեալ կը լինի։ Մենք հարկաւոր ենք համարում ծանօթացնել մեր ընթերցողին «Русскія Вѣд.» մէջ տպագրված մի յօդուածի հետ, որ քննում է այդ հարցը։ Կարծիքների փոփոխականութիւն այդպիսի մի կարևոր համառուսական հարցի վերաբերմամբ, շատ ցանկալի պիտի համարվի։

Առաջներում—ասում է յօդուածագիր պ. Մաքսիմօվ—բաւական էր ձեռք գցել մի որ և է հրացան կամ ատրճանակ, թաքնվել արագ շինված բարրիկադի ետևում, և այդպիսին արդէն մի լուրջ հակառակորդ էր զօրքի համար։ Այժմ պատերազմական տեխնիկայի զարգացումը անհնարին է դարձրել այդ բանը։ Բազմահազար ամբոխը, զինված ռէվօլվերներով, կոչնչանայ մի վաշտ հետևակ զօրքի կրակի տակ, ինքը չը կարողանալով ոչինչ վնաս հասցնել զինւորներին։ Մի գնդաձիգ բաւական է, որ հարկադրէ փախչել ինչ ամբոխ ուզում էք, լինի նա զինված թէ ոչ։ Ժամանակակից թնդանօթների դէմ անզօր են ամեն տեսակ բարրիկադներ և բացի դրանից, ժամանակակից քաղաքների լայն և ուղիղ փողոցները չափազանց աննպաստ են բարրիկադներ շինելու համար։ Մի խօսքով՝ կանոնաւոր զօրքերի դէմ այժմ կարող են կռւել նոյնպէս կանոնաւոր զօրքեր, զինված համաձայն պատերազմական տեխնիկայի, և ոչ թէ հասարակ ժողովուրդը, որ շտապով զինվել է ինչով կարողացել է և ծանօթ չէ զինւորական կարգապահութեան։ Մոռանալ այս՝ կը նշանակէ բոլորովին չը հասկանալ, թէ ինչ է ժամանակակից զօրքը և ինչ սարսափելի միջոցներ ունի նա իր ձեռքում։ Ենթադրութիւնները, թէ կարելի է զինել ժողովուրդը պատերազմական տեխնիկայի համաձայն՝ եղել են և կը մնան ցնորք։ Դրա համար հարկաւոր են բազմամիլիօն միջոցներ, որ չունեն և չեն կարող ունենալ յեղափոխական կուսակցութիւնները. դրա համար անհրաժեշտ է զինվածներին կանոնաւոր կերպով վարժեցնել հրացանաձգութեան և զինւորական կարգերի, մի բան, որ ծածուկ անել չէ կարելի և եթէ աջողվի մի տեղից ստանալ մեծ քանակութեամբ հրացաններ, կառավարութիւնը, ի հարկէ, կը խլէ նրանց և գործը առաջ չի գնայ։ Ուստի զինվելու կոչերը միայն այն են առաջացնում, որ մարդիկ զինվում են ռէվօլվերներով, մեծ մասամբ անպէտք, որոնք, բացի դրանից, գտնվելով անվարժ ձեռքերի մէջ, սովորաբար աւելի շատ վնասում են իրանց տէրերին ու նրանց բարեկամներին, քան հակառակորդներին։ Այսպէս եղել է մինչև այժմ, այսպէս կը լինի, ի հարկէ, և այսուհետև. և խօսակցութիւնները զինված ապստամբութեան մասին ծիծաղելի կը լինէին, եթէ նրանք չը հեռացնէին հասարակութիւնը իր շահերի համար կռւի մղելու իրական միջոցներից, եթէ չը տանէին դէպի աւելորդ արիւնհեղութիւններ։ Այսպիսի հետևանքները չափազանց տխուր են և չեն թոյլ տալիս վերաբերվել զինված ապստամբութեան մասին եղած խօսակցութիւններին նոյն իսկ մի հասարակ ժպիտով։ Այս խօսակցութիւնները պարզապէս ծիծաղելի չեն, այլ յանցաւոր են, յանցաւոր՝ ոչ թէ գործող իրաւունքի տեսակէտից, այլ ժողովրդի շահերի տեսակէտից և նրանց դէմ պէտք է բողոքել բոլոր ուժերով։

Բայց զինված ապստամբութիւն երազող կուսակցութիւնները միշտ յոյս դրած չեն միայն զինված ժողովրդի ոյժերի վրա. նրանք հաշւում են թէ ինքը զօրաբանակն էլ կենթարկվի յեղափոխական պրօպագանդային և կանցնէ ժողովրդի կողմը, կառավարութեան դէմ։ Դատելով վերջին դէպքերով, այսպիսի յոյսերը լուրջ իրական հիմքեր ունեն. բայց և այնպէս, նրանք, որ ուրախանում են այդ դէպքերով և տեսնում են նրանց մէջ յեղափոխութեան յաղթանակի երաշխաւորութիւն, բոլորովին չեն ուզում հաշւի առնել այն հետևանքները, որոնց կարելի է հասնել այդ ճանապարհով։ Եթէ բանակը յեղափոխականացնելը առաջ կը գնայ այնպիսի քայլերով, ինչպէս գնում է այժմ, մեր զօրքը կը դադարէ գոյութիւն ունենալուց, որովհետև արմատից խախտված կարգապահութիւն ունեցող զօրքը այլ ևս զօրք չի լինի, և մենք անզօր կը լինենք ոչ միայն Գերմանիայի կամ Աւստրիայի դէմ, այլ և եւրօպական ամենաթոյլ մի պետութեան դէմ։ Բայց այս քիչ է։ Քարուքանդ անելով զօրքը, մենք առաջ չենք տանի յեղափոխութեան գործը, որովհետև արտաքին թշնամու դէմ անզօր բանակը կը մնայ ահաւոր հակառակորդ ժողովրդի ազատութեան գործի։ Խառնել զօրքը քաղաքականութեան մէջ, նշանակում է յանձնել պետական հարցերի լուծումը ոչ թէ հասարակական կազմակերպված կարծիքին, այլ կոպիտ ոյժին, որ այսօր գնում է մէկի ետևից, վաղը կերթայ միւսի ետևից։ Սովորաբար ինչի՞ վրա էր յենվում հակայեղափոխութիւնը, եթէ ոչ զօրքի վրա։ Այն իսկ զօրքերը, որոնք Ֆրանսիայում 1848-ի փետրվարին անցան ժողովրդի կողմը, միթէ չէին գնդակահարում բանւորներին նոյն տարվայ յունիս ամսին և յետոյ չօգնեցի՞ն Նապօլէօն III-ին կատարել պետական յեղափոխութիւն։ Զօրքը միշտ կը մնայ զօրք, այսինքն մի կազմակերպութիւն իր սեփական շահերով, որոնք չեն հաշւվում հասարակական խմբերից և ոչ մէկի շահերի հետ, և անխելքութիւն է նրան յանձնել պետական հարցերի վճիռը։ Այսօր նա օգնում է հանրապետութիւն յայտարարելու, բայց վաղը, գնալով որ և է մի արկածախնդրի ետևից, պատրաստ կը լինի մտցնել ամենադաժան զինւորական դիկտատուրա։ Ո՛չ մի քաղաքական նուաճում չէ կարող հաստատ լինել, ոչ մէկը նրանցից չէ կարող տալ իր բոլոր պտուղները, եթէ այդ նուաճումը արել է ոչ թէ հասարակական կազմակերպված կարծիքը, այլ ձեռք է բերվել միմիայն զօրքի պատահական տրամադրութեամբ։ Զօրքը պիտի լինի կուսակցական մրցութիւններից դուրս և չը պիտի խառնվի քաղաքականութեան մէջ. հարկադրել նրան, որ խառնվի, նշանակում է ստեղծել սարսափելի մի վտանգ երկրի ապագայ ամբողջ զարգացման համար և սեփական ձեռքերով գերեզման փորել իր համար։

Բայց յօդուածագիրը դէմ չէ, որ ժողովուրդը զինվի իր ինքնապաշտպանութեան համար։—Դա բոլորովին ուրիշ բան է, դա զինված ապստամբութիւն չէ։

*

«Возрожденіе» լրագրում մի օֆիցեր բարձրացնում է մի շատ կարևոր ժամանակակից հարց: Ամեն տարի, ինչպէս յայտնի է, զօրքից արձակվում են իրանց ծառայութեան ժամանակամիջոցը լրացրած զինուորներ: Դրանք անուանվում են պահեստի զինուորներ: Ահա այժմ էլ արձակվում են այդպիսի զինուորներ, որոնց մէջ քիչ չեն և հայեր Գանձակի և Բագուի նահանգներից:

Նրանք—ասում է պ. օֆիցերը—վաղուց հեռացել են իրանց ընտանիքներից, իրանց ազգականներից, իսկ շատերը չը գիտեն նոյն իսկ կենդանի՞ են մնացել ազգականները և ո՞ւր են նրանք այժմ: Նրանք գէս ու գէն են ընկնում, շտապում են, ժամեր են հաշւում և այսօր կամ վաղը իրանց հայրենի երկրի սահմաններում կը լինեն: Նրանք քիչուոր չեն. մի ահաւոր ամբոխ, երկիւղ ազդող, որ նոր է թողել զինուորական ծառայութիւնը և սակայն... անզէն է: Ողջ ու անփորձ տեղ կը հասնե՞ն նրանք,—դժուար է ասել: Միանգամայն հաւանական է, որ նրանց վրա յարձակում կը գործեն, իսկ թէ ինչով կը վերջանայ դա, դժուար չէ ասելը: Ի՞նչ ելք կայ: Ուղարկե՞լ նրանց զէնքով,—այդ սահմանված չէ և բացի դրանից ո՞վ կերաշխաւորէ թէ պահեստի զինուորները, գրգռված հայրենի օջախի քայքայման տխուր պատկերով, սրտին մօտիկ մերձաւորների կորստով, իրանք չեն սկսի եղբայրասպան պատերազմ և ամբողջ երկիրը կորստի և աւերման սարսափների մէջ չեն գցի: Շրջապատե՞լ նրանց կօնվօյով: Հազիւ թէ մէկը գլխի ընկնէ այդպէս անձնուէր կամ կամենայ նախաձեռնութիւն յանձն առնել առանց բարձրից հրաման ստանալու: Իսկ ժամանակը կարճ է: Հրաման, եթէ գալու էլ լինի, սովորականի պէս կը գայ միայն այն ժամանակ, երբ այլ ևս մարդ չի լինի, որ պաշտպանեն: Իսկ պահեստի հայերը շրջում են կորագլուխ, խոր ու տխուր մտածմունքներով. զգում ես, որ ելք են որոնում, բայց չեն գտնում, մինչդեռ շտապում են ու շտապում:

Ահա դրութիւն: Ահա հաւատարիմ ծառայութեան վարձատրութիւն: Եւ դեռ զարմանում են, որ զինուորն էլ յեղափոխութեան շարքերն է մտնում, բարձրագոյն պահանջներ է անում: Ինքնապաշտպանութեան զէնք պահեստի հայ զինուորներին չեն տայ. այդ արդէն վճռված է և բազմաթիւ անգամ կրկնված: Ի՞նչպէս կարելի է հային զէնք տալ: Այդ թուրքն է, որ անարգել զէնք է գնում և պահում, նոյն իսկ գումարում գնդակներ էլ է գործ ածում: «Բարեխնամ» կառավարութիւնը այդտեղ մատների արանքով նայող է, իսկ հայից զէնք խլելը սովորական բան է նրա համար: Զէնք տալ պահեստի զինուորին, երբ Գանձակի կոտորածի ժամանակ «հաշտարար» Տակայշվիլի նոյն իսկ ծառայութեան մէջ գտնվող հայ զինուորներին է զինաթափ անում, թողնելով, որ ամբողջապէս թուրքերից կազմված ոստիկանութիւնը փառաւոր կերպով գեղակարէ կոտորածները: Զինուորին սպառնացնում են, զինուորին վիրաւորում են, խլելով նրա զէնքը և ապա զարմանում են, որ Մանջուրիայում անգին բանակներ փախչում էին եապօնացիների առջևից: Այդ տեսակ դաստիարակութիւնից ի՞նչ պիտի դուրս գայ, բացի փախուստից և յեղափոխութիւնից:—Պ. Օֆիցերը իզուր է կարծում թէ հայ զինուորը, գնալով իր տունը և տեսնելով իր հայրենի օջախը քանդած, իր հարազատներին մորթոտած, չի զգուշի լոկ այն պատճառով, որ անզէն է: Ո՛չ: Նա կը գտնէ միջոցներ իր սրտի մորմոքը հանգստացնելու համար:

Ի վերջոյ պ. օֆիցերը դիմում է կոմիտէտներին, առաջարկում է որ գոնէ նրանք պահապաններ տան, որպէս զի անզէն զինուորները վտանգի չենթարկեն իրանց կեանքը: Թող կոմիտէտները ուշադրութիւն դարձնեն այդ հրաւէրի վրա:

⁂

«Наша Жизнь» լրագրի մէջ էլ տպված է մի յօդուած այն բարբարոս դատավարութեան մասին, որով Բագուի զինուորական դատարանը մահվան պատժի է դատապարտել նահանգապետ Նակաշիձէի կարծեցեալ սպանողներին: Յօդուածը համարեա մի և նոյնն է, ինչ «Մշակի» մէջ թարգմանաբար տպվողը: Միայն մազերը բիզ-բիզ են կանգնում այդ վայրենի «արդարադատութիւնից»: Գլխաւոր զինուորական դատարանից պահանջվում է ոչ միայն ջնջել այդ սոսկալի դատավճիռը, այլ և դատի ենթարկել այդպիսի վճիռ կայացնող դատաւոր-դահիճներին: Ջնջեցէք, վերջացրէք զինուորականների հօտենտոտեան արդարադատութիւնը: Այդ է պահանջում ամբողջ Ռուսաստանի պատիւը...

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԻ ՀԱՄԵՍՏ ԶԻՆՈՒՈՐԻ ԹԱՂՈՒՄԸ

Դեկտեմբերի 1-ին Խօջիվանքի գերեզմանատանը կատարվեց մի թաղում:

Փոքրիկ մատուռում պատարագ կատարվեց և դիակը հողին յանձնեցին:

Գերեզմանատունը լիքն էր մի տարօրինակ հասարակութիւնով: Չկար ոչ մի հարուստ ոչ մի «աղա»: Ժողովուրդ էր հաւաքվածը, իսկական դեմօսը, այն՝ որի անունից ստեղծվել է դեմօկրատ բառը:

Երբ դագաղը դուրս բերին, ներկայ եղողների ամբողջութիւնը լալիս էր: Ողբում էին կիները, ողբում էին ծերերն ու երեխաները:

Այդ դեռ քիչ է: Լալիս էին կտրիճները: Առիւծ կռւողները, որոնք խաղում են գնդակի ու սրի հետ, որոնց համար մահը մի երեխայական խաղալիք է—այդ քար-սրտերը, այդ երկաթ-կտրիճները լալիս էին մանկան նման:

Սիրտս մղկտաց. լացի և ես:

Օտար էր նա, մի «ղարիբ-ղարրաթ», մի «անտէր-անտիրական»:

Արդեօք այնտեղ, Խնուսի ձորերում ի՞նչ զգաց նրա մօր սիրտը. թուխպ առաւ նա, ճմլվեց...

Անտէր-անտիրական ասացի... Ո՛չ, սխալվեցի. Նա տէր ունէր: Դեմօսը, ամբոխը, հայ ժողովուրդն էր նրա տէրը—ցաւագին, տանջված, արիւնաքամ հայ ժողովուրդը:

Թաղում էին խնուսցի Մուշեղին, մի սովորական հայդուկի:

Այնտեղ, թուրքական գազանութիւնների աշխարհում նա կռւել էր Անդրանիկի Գէորգ-Չաւուշի դրօշակների տակ: շատ մահ էր տեսել, շատերին մահ պատճառել:

Հսկայ հասակով, հայկական արծւաքթով, խոշոր ու փայլուն աչքերով—կտրիճ էր նա յանդուգն հայդուկի նման, սրտոտ ու անվեհեր հայդուկի նման, քնքոյշ ու մարդասէր կրկին հայդուկի նման:

Ընկաւ նոյնպէս հայդուկի նման:

Նոր էր նա եկել Թիֆլիս, յանկարծ լսեց, որ բարբարոսութիւնն այստեղ էլ գլուխ է բարձրացրել: Տեսաւ, որ հայն այստեղ էլ հալածվում, կոտորվում է:

Նա եկել էր հանգիստ առնելու, բայց հայի դառն ճակատագիրը նրան այստեղ էլ դադար չը տուեց:

Հայի համար սահման չկայ, սար ու ձոր, լեռ ու դաշտ, ծով ու ցամաք չկայ. ամեն տեղ հալածված, ամեն տեղ արիւնաքամ...

Ու նա զէնք առաւ, գնաց մտաւ աղքատի խրճիթը, Խարբուխի թաղը, որպէս զի չթողնէ «բարեխնամ» կառավարութեան աչքի առաջ կոտորվելու, այրվելու Թիֆլիսին՝ Բօրչալուի ասպատակների ձեռքով:

Քանի նա իր մի քանի ընկերներով այնտեղ էր, դժոխքի ծառաները երբեք չյանդգնեցին դուրս գալ իրանց դիրքերից, վրա տալ աղքատների տնակներին, ժայռի ծայրին, սարի լանջի կպած այդ թշուառութեան բներին:

Թաղն ազատ մնաց աւերից ու կրակից:

Բայց ահա մօլլայի տնից բօրչալուեցիները ուզում են խուժել: Մուշեղը դուրս է գալիս դիրքից, գրոհ է տալիս նրանց վրա—փախցնում: Նա դրանով չէ բաւականանում, գնում կոտրում է տան դուռը, որ աւելի պէս դուրս վանէ թաք կացած բորենիներին:

Կոտրում է առաջին դուռը—մարդ չկայ: Կոտրում է երկրորդը: Սկսվում է մի յուսահատական կռիւ: 100-ից աւելի զինված թուրքեր վրա են պրծնում: Մուշեղը գործում է հերոսաբար և ընկնում հերոսաբար:

Ահա թէ ում էին թաղում Խօջիվանքի գերեզմանատանը:

Երկու դաշնակցականներ ճառեր խօսեցին: Ցաւակցողների արցունքներն աւելի յորդառատ դարձան: Գեղեցիկ էր առաջին ճառը, բովանդակալից և ազդու: Իսկ երկրորդը հրաւիրեց ներկայ եղողներին կտրիճ լինել Մուշեղի նման և մարդասէր կրկին նրա նման: «Մուշեղը ձեզ կանիծէ, եթէ անմեղներին ձեռք տաք, թալանով զբաղվէք:»

Այո, մեռաւ ազատութեան մի համեստ զինուոր:

Մեռաւ ժողովրդի զաւակներից մէկը:

Խաժակ

ԳԱՆՁԱԿԻ ԹՌՈՒՑԻԿՆԵՐԸ

Հայ-յեղափոխական դաշնակցութիւնը հրատարակել է Գանձակում հետևեալ թռուցիկները:

Նոյեմբերի 20-ին

Հայեր:

Մենք գտնվում ենք օրհասական դրութեան մէջ: Պէտք է մեր բոլոր ոյժերը լարենք փրկելու համար թշնամու ճիրաններից մեր կեանքը ու գոյքը, մեր քոյրերի, մայրերի, մեր կանանց պատիւը: Այս օրհասական բօպէներին նուիրական գործին, ինքնապաշտպանութեան սուրբ գործին, պէտք է նուիրել ամեն ինչ. բան խնայելը գործից՝ յանցանք է, աններելի, սոսկալի յանցանք, մի այնպիսի մեղք, որը յետոյ ոչնչով չէ կարելի քաւել: Ինքնապաշտպանութեան զինուորներին աջակցեցէք ամեն կերպ, զէնք, ռազմամթերք, հաց, ջուր, թէյ, տաք կերակուր հասցրէք նրանց. ամոքեցէք, թեթևացրէք նրանց վէրքերը: Ամեն մի հայի տան վիրաւորները պէտք է սրտագին խնամք, անկեղծ հոգացողութիւն գտնեն, և այդ քաջալերի նրանց, որոնք դիրքերում կանգնած պաշտպանում են մեր կեանքն ու գոյքը, պաշտպանում են հայութեան պատիւը...

Լաւ լսեցէք, պատիւը, մի շատ նուիրական բան, որը թանգ է կեանքից նոյն իսկ: Պաշտպանելով արիւնարբու թշնամուց մեր կեանքն ու գոյքը, մենք ամենից շատ պէտք է պաշտպանենք մեր պատիւը. հայութեան անունը, հայ ժողովրդի, իբրև քաղաքակիրթ ազգութեան, պրեստիժը: Այդ բանը, պատւի պրեստիժի պաշտպանութիւնը մի ծանր ու շատ պատասխանատու պարտաւորութիւն է: Այդ պարտաւորութիւնը հարկադրաբար պահանջում է մեզանից ինքնապաշտպանութեան գործից չը խնայելով ոչինչ, չը կողոպտել մեր թշնամիներին, բանի կամ առաւել ևս գաղտագողի չիւրացնել նրանց գոյքը, բացի զէնքից, չը սպանել ու չանարգել նրանց կանանց, չը սպանել նրանց երեխաներին, չը հրդեհել ու գործ ունենալ միմիայն կռւողների, զինւածների հետ, ամեն կերպ ցոյց տալ, որ մենք կուլտուրապէս բարձր ենք մեր կոյր խաւար ու արիւնարբու թշնամիներից ու արժանի ենք կուլտուրական քաղաքակիրթ ազգերի շարքում պատուաւոր տեղ գրաւելու...

Անզէն, չը կռւող պարսկահպատակներին ձեռք չը տալ ոչ մի դէպքում:

Հ. Յ. Դաշնակցութեան Կենտրոնական Կոմիտէ:

---

25 նոյեմբերի

Գանձակի բաղաքացիներին

Սրանով Հ. Յ. Դաշնակցութեան զինուորական շտաբը յայտնում է այն բոլոր անձանց, որոնք մինչև այժմ չեն վերադարձել իրանց տները, անմիջապէս վերադառնալ. հակառակ պարագայում կազմակերպութիւնը ստիպված կը լինի գրաւել նրանց տները և կայքը: Նոյնպէս արգելվում է քաղաքից հեռանալը առանց յարգելի պատճառների: Իւրաքանչիւր հեռացող պարտաւոր է իր հեռանալու մասին նախօրօք յայտնել տեղական կոմիտէին, ներկայացնելով իր պատճառաբանութիւնները: Առանց պատճառաբանութեան հեռացողները քաղաքից, կը ձերբակալվեն և կենթարկվեն տուգանքի:

Քանի որ հինգշաբթի օրվայ հաշտութիւնից յետոյ, թուրք խուլիգանները ամենալիրբ կերպով խախտեցին պայմանը և թակարդի մէջ ձգեցին բազմաթիւ հայեր, սրանով յայտարարում ենք, որ մինչև վերջնական, հաստատուն խաղաղութիւնը, հայերը ոտք չը դնեն թուրքական մասը:

Ինչ վերաբերում է թիւրքերին, որոնք կուզենան գալ հայկական մասը, հրամայվում է ոչ մի կերպով արգելք չը հանդիսանալ նրանց, որ և է թշնամական փորձ չանել նրանց դէմ և սփոփել ամեն կերպ դիւրութիւններ տալ. հակառակ դէպքում յանցաւորները կենթարկվեն ամենախիստ պատժի: Իսկ կասկածելի ընթացք բռնող թուրքերին միայն ձերբակալել և անմիջապէս յայտնել այդ մասին Շտաբին կամ Կոմիտէին:

Յայտնվել են հայ խուլիգաններ, որոնք ընկնում են փողոցները և զանազան սուտ լուրեր տարածելով, յուզում ժողովուրդը և խռովութիւններ յարուցանում են: Հասարակութիւնը հրաւիրվում է յանձնել այդպիսիներին զինուորների միջոցով կազմակերպութեան ձեռքը:

Զինուորական Շտաբ:

ԳԱՆՁԱԿԻ ԴԷՊՔԵՐԸ

27-ին նոյեմբերի:

Գանձակի աղէտը սկսելուն պէս իր արձագանքն ունեցաւ գաւառի այն մասերում, որտեղ խիտ է թուրք ազգաբնակութիւնը և սակաւ կամ պատահական է հայը: Կոտորածը Գանձակի քաղաքում սկսվելուն պէս թուրքերը սուրհանդակներ են ուղարկում շրջակայ գիւղերը՝ իմաց անելու թուրքերին, որ շտապեն քաղաք մասնակցելու համար կոտորածին թալանին, կողոպուտին. բացի այդ սուրհանդակներին յանձնարարում են յայտարարել բոլոր թուրքերին, որ նրանց թոյլ է տրվում, հրամայվում է նոյն իսկ կոտորել բոլոր հանդիպող հայերին անխնայ, անողորմ: Սուրհանդակները քաղաքից դուրս են գալիս թէ չէ, չարագուշակ լուրը կայծակի արագութեամբ տարածվում է ամեն կողմ, ու թուրքերն իսկոյն սկսում են իրանց գործը. կոտորել ու կողոպտել են սկսում պատահող հայերին, խումբերով թափվում են քաղաքի շրջականներից բազարի հրապարակը ու սոված գայլերի, գիշատիչ գազանների նման թափվում հայերի խանութների վրա, վայրենի աղաղակներով, հարա-հրոցով: Նորեկները բազարի հրապարակում փնտրելիս են լինում հայերի, որ իրանց ձեռքերը շաղախեն նրանց արիւնով, որ իրանք էլ «հերոսանան» հայի սպանութեամբ, բայց կենդանի հայեր չեն գտնում. մինչև նրանց գալը ճանկ ընկածին սպանած են լինում. եկւորներին մնում է միայն այլանդակել սպանածների դիակները, որը նրանք կատարում են ամենաարիւնարբու գազանների յատուկ վայրագութեամբ...

Սուրհանդակների տարած հրամանները տեղ հասնելուն պէս սկսվում է կոտորած Գանձակից դէպի հիւսիս գտնվող այն տափարակի վրա, որտեղ գտնվում են գերմանացի Ֆերի, ռուս իշ. Գօրչակովի, հայ Ղորղանեանի ու Առաքելեանի ընդարձակ այգիները. այդ այգիներում բանում են հայ մշակներ. տարվայ այս ժամանակին հարիւրներով են լինում նրանք այնտեղ, մանաւանդ Ֆօրերի «Ղարաերի» վիթխարի այգում: Թուրքերը, լաւ իմանալով, որ այդ այգիներում հայեր կան, գիշատիչ գայլերի նման թափվում են այգիները ու սկսում հայերի անխնայ կոտորած. կոտորում են անզէն, անպաշտպան գիւղացի մշակներին: Շատերին աջողվում է թաքնվել, պատսպարվել, ազատվել մի կերպ, շատերը կոտորվում են: Ղորղանեանի ու Առաքելեանի այգիները իրանց միջի հոյակապ շինութիւններով քայքայվում, քանդվում, աւերվում են: Ղորղանեանի փառահեղ վիլլան, Զաղալուի կալուածքի դիմաց, հարիւր հազար արժեցող, իր միջի դաշնամուրներով, ընտիր զարդերով, արտասահմանեան կահ-կարասիքով կրակի ճարակ է դառնում, և այդ, թոյլ ենք տալիս մեզ ասել, վիլլայի տիրոջ հախն է. պատիւ է բերում նրան այն, որ Զաղալուի տափարակում ձեռք է բերել հող ու սկսել կուլտուրական գործ, այգեպանութիւն մեծ ծաւալով, բայց ի՞նչ «ղալաթ» էր անում Զաղալուի տափարակում հարիւր հազարանոց վիլլան. անհամեմատ աւելի մեծ գործ չէ՞ին լինի արած Ղորղանեանի պէս պարոնները, եթէ հարիւր հազարներ տային բնաջնջման դատապարտված հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործին, եթէ գնէին անահ, աներկիւղ մեր արիւնարբու թշնամիների առաջին կանգնող, նրանց հետ հերոսաբար կռւող հայ կտրիճների համար հրացաններ ու փամփուշտներ... Եթէ Ղորղանեանի այգու վիլլայում դաշնամուրների ու հարիւրներ արժեցող զարդերի փոխարէն կազմ պատրաստ լինէին ինքնապաշտպանութեան մի քանի զինուորներ մօսինի հրացաններով, այն ժամանակ նրա այգին կը փրկվէր, համ կը փրկվէին շատ թանկագին կեանքեր: Ֆօրերի Ղարա-երի այգում մի չողաւեցի հայ կտրիճ, այգու բանւոր, հրացան է ունենում իր մօտ, ու նրան աջողվում է մի քանի տասնեակ հայ մշակներ փրկել անխուսափելի մահից. քաջարի երիտասարդը պատսպարվում է մշակների հետ միասին եղէգներում ու այն տեղից հրացանաձգութիւն է անում թուրքերին, յետ մղում նրանց: Բայց չը նայած դրան Ղարա-երի այգում տեղի է ունենում սոսկալի կոտորած. չողաւեցի քաջին աջողվում է փրկել մշակների մի մասը միայն, որոնք կարողանում են նրա հետ միասին նստել եղէգների մէջ: Մշակներից շատերը կոտորվում են այգետէր, միլիօնների տէր, «կուլտուրական» գերմանացի Ֆրիդրիխ Ֆօրերի աչքերի առաջին, և նա, Շիլլերների ցեղին պատկանող երօպացին, մատը մատին չէ խփում նրանց ազատելու համար, այն ինչ հնարաւորութիւն ունէր ազատել, ազատել դրամով (հայերի շնորհով հարստացած ճարպակալած կենդանին սովից չէր սատկի, եթէ մի գումար տար գազանացած թուրքերին. հայերը յետ կը դարձնէին նրան իր սրբութիւն սրբոցը, փողը. դրամական փրկութեան շնորհով ազատվողներ մահից շատ են եղել քաղաքում և ուրիշ տեղերում), կարող էր ազատել նա իր մշակներին զէնքով. իր մօտ բաւականին հրացաններ ու փամփուշտներ է ունենում այգու պաշտպանութեան համար (ոչ մարդկանց, այլ մշակների) իշխանութիւնից ստացած: Կոտորվող հայերը, որոնց մէջ լինում են շատ կտրիճներ, խնդրում, աղաչում են Գեօթէի ցեղակցին տալ իրանց այդ հրացանները ինքնապաշտպանութեան համար, շրջապատող գազաններից, անխուսափելի մահից փրկվելու համար, բայց նա, Ֆրից Ֆօրերը, բիսմարկեան սառնարտութեամբ մերժում է նրանց աղերսը ու հանգիստ ականատես է լինում իր համար միլիօններ վաստակող, մշակների կոտորածին: Պատմում են մի աւելի սոսկալի փաստ. Ֆօրերի մօտով թուրքերը քարշ տալիս են լինում երկու հայ երեխաների, 12—14 տարեկան, եկած իրանց հայրերի հետ գիւղից օրը 20 կոպէկով այգում ճախ հաւաքելու համար. երեխաները աղիողորմ ճչում, քարերն անգամ լացացնող արտասւաթախան աղերսով դիմում են քաղաքակիրթ «կուլտուրտրեգերին» իրանց «խաղէինին» ու աղաչում, որ փրկէ նա իրանց գազանների ձեռքերից. բայց զուր է կորչում նրանց աղերսը. Ֆօրերը ասում է նրանց՝ «գնացէք, գնացէք հետները, դրանք ձեզ ոչինչ չեն անի»: Թուրքերը տանելիս են եղել երեխաներին, հաւանական է, մի քամինելի արարքի ենթարկելու նրանց սպանութիւնից առաջ. նրանք անչափ յամառում են. կատաղած գազանները դաշոյններով մորթում են նրանց կուլտուրտրէգէրի առաջ. նահատակվող երեխաները մինչև վերջին շունչը կրկնելիս են լինում՝ «խաղէին, քեզ մատաղ, մեզ թափիր, խաղէին...» Խեղճ մանուկներ, պարզամիտ, միամիտ, անմեղ զաւակներ. եթէ իմանայիք, հասկանայիք, որ ձեր «խաղէինի» երակներում Աբդուլ-Վիլհելմի արիւնն է հոսում, չէիք դիմի նրանց ձեր աղերսով. ձեր մանկական շրթունքները անէծք կը մրմնջային նրան... Անհեթեթ գերմանական գաղութում, որը գտնվում է Շամքոր գետի ասպանում, սակաւաթիւ հայերին, թւով 28 հոգի, թուրքերը եկել են ու գերել, կողոպտելով նրանց խանութներն ու տները: Շատերը մինչ թուրքերի գալը ազատվել են փախուստով: Գերիներից 21 հոգի ազատվել են ութ հարիւր բուբլի փրկանք ստանալուց յետոյ: Գերմանացիները քաշվել են [illegible], թողնելով հայերին թուրք խուժանի տրամադրութեան տակ: Երբ գերիներից մէկը եկել է 800 ռ. փրկանքը ճարելու համար, գերմանացիները մերժել են մի կոպէկ անգամ տալ նոյն իսկ պարտքով: Ուրիշ ազատ հայերից է փողը ճարել և ուղարկել թուրքերին: 23 հոգի գերիներից թուրքերը թողել են իրանց մօտ մի 17 տարեկան հայ օրիորդի և մի ջահել կնոջ. նրանց ուր գտնվելն այժմս յայտնի չէ:

Ստ. Տէր-Աւետիքեան

ԴԷՊՔԵՐԸ ԳԱՆՁԱԿԻ ԳԱՒԱՌՈՒՄ

Նոյեմբերի 28-ին

Գանձակում սկսված հրդեհը տարածվում է գաւառում ու գնալով աւելի ու աւելի լայն ծաւալ ընդունում: Ոչ մի տեղ այլ ևս հայի համար կեանքի ու գոյքի ապահովութիւն չը կայ: Հայ ազգաբնակութիւնը թողնված է ճակատագրի կամքին, [illegible]: Այնտեղ միմիայն ապահով են զգում իրանց հայերը, որտեղ կայ կազմակերպված ինքնապաշտպանութիւն, որտեղ հայը զէնք ու ռազմամթերք ունի:

Այսօր Գանձակում նամակներ ստացվեցին Չարդախլուից, որտեղ հաւաքված են աւերված Գետաբէկի, նրան կից գտնվող Ղազախ գիւղի ու Բաղաքենդ հայ գիւղի հայերը, կորցրած տուն, տեղ, կայք, կարողութիւն, կորցրած շատերին իրանց սիրելիներին: Չարդախլուն շրջապատված է թուրք հրոսակախմբերով ու խուժանով, որոնք ամեն բոպէ փորձեր են անում ներս խուժելու գիւղը ու բնաջինջ անելու ազգաբնակութիւնը: Հայերը հերոսական ջանքեր են անում ինքնապաշտպանութեան համար. հարւածում են թշնամուն, պատժում են նրան ըստ արժանւոյն, բայց նա իր թւական գերազանցութեան շնորհով կարողանում է պահպանել իր դիրքերը ու առաջ շարժվել նոյն իսկ:

Գետաբէկը ու նրան կից գտնվող Ղազախ հայաբնակ գիւղը (երկուսում կը լինեն մօտ 100 տուն հայ) ենթարկվել է շրջակայ թուրք խուժանի ամարդի յարձակման նոյեմբերի 22—23-ին: Հայերի խանութները և տները կողոպտվել են ու հրդեհվել (գործարանին կից հայ խանութներ շատ կան). ազգաբնակութեան մի մասը ենթարկվել է սրածութեան, իսկ միւս մասը, թւով աւելի նշանաւոր, փախել, պատսպարվել է Չարդախլու գիւղում, զրկվելով իր բոլոր ունեցածից: Գետաբէկում սպանվել է տեղական ռուս քննիչը. նոյն իսկ, ինչպէս լսվում է, օտարազգիներից էլ և գործարանում ծառայող [illegible] եղել են, բայց ոչ, ի հարկէ, հայերի չափ:

Նոյնպիսի աւերման ու կողոպուտի է ենթարկվել Բաղաքենդ հայ գիւղը, որը գտնվում է յայտնի Զուլգադարով թուրք կալուածատէրերի կալուածքի շրջանում, շրջապատված է չորս կողմից թուրք գիւղերով, ունի մօտ 200 ծուխ: Ենթարկվելով կատաղի յարձակման չորս կողմից, օգնութիւն չը ստանալով ուրիշ հայ գիւղերից, Բաղաքենդը իր սեփական ոյժերով պաշտպանվել է ինչքան հնարաւոր է, պաշտպանվել է հերոսաբար, սպառելով իր ռազմամթերքը, ստիպված է եղել անձնատուր լինել թշնամուն, որը աւերել, քանդել է գիւղը, կողոպտել, հրդեհել է տները, քանդել է եկեղեցին, նախ սրբապղծելով նրան, ու կոտորել է նրանց բոլորին, որոնք չեն կարողացել փախչել շուտով ու ազատվել այդպիսով գազանների ճիրաններից:

Կողոպտված ու հրկիզված բաղաքենդցիք թափվել են նոյնպէս Չարդախլու գիւղը, որի դէմ ուղղվել են այնուհետև Գետաբէկի շրջանի գազանաբարոյ այրումիների ու Զուլգադարովների լայնածաւալ կալուածքներում վխտացող կազմակերպված թուրք հրոսակախմբերի բոլոր ոյժերը: Գետաբէկ, Ղազախ ու Բաղաքենդ գիւղերից փախցրել, անհետացրել են երիտասարդ կանանց ու աղջիկների...

Նամակագիրները յայտնում են, որ աւելի վատթար դրութիւն երևակայել անհնարին է. ճանապարհներին այս ու այն տեղ ընկած են կանանց ու երեխաների դիակներ, կարծես Թամերլանի օրդաներն արշաւանք էն գործել: Եթէ Չարդախլուն էլ վերցնեն ու աւերեն, այն ժամանակ նախ կանհետանայ, կը ոչնչանայ իսպառ Գանձակի գաւառի շէն, ունևոր, աչքի ընկնող հայաբնակ մեծ գիւղերից մէկը, յետոյ միւս հայաբնակ գիւղերը (Ջագիր, Բարսում, Գառնակեր) կենթարկվեն յարձակման ու երկար դիմանալ թուրք խուժանին ու միացած հրոսակախմբերին առանց դրսի օգնութեան չեն կարող: Օգնել հարկաւոր է հայ ժողովրդին, նա օրհասական դրութեան մէջ է. նրա դահիճների թիւը գնալով ստուարանում է. եթէ այժմս լուրջ օգնութիւն չը լինի, մի քանի ամսից յետոյ այդ օգնութիւնը շատ ուշ կը լինի ու հետևաբար անօգուտ. աւերակները չեն շէնանայ ու դիակները չեն կենդանանայ. օգնութիւնը հիմա է հարկաւոր, հիմա այս մօմենտում, լաւ լսեցէք: Հասկանում, ըմբռնում էք լիովին, թէ ինչպիսի օգնութիւն է հարկաւոր այժմս բնաջնջման դատապարտված հայ ժողովրդին. կարծում էք միջնորդութիւններ են հարկաւոր նրա համար. տասն ամիս շարունակ (Բագուի առաջին դէպքերից յետոյ) կատարվող այդ միջնորդութիւնները հայի արեան յորդառատ հեղման առաջը չառան բնաւ. ընդհակառակը, աւելի սաստկացաւ այդ հեղումը... Այս քանի օրս արված միջնորդութեան շնորհով փոխարքայի օգնականի կարգադրութեամբ Զագամ կայարանից դրագունների մի էսկադրօն է գնացել Գետաբէկի, Ղազախ ու Բաղաքենդ գիւղի աւերակները դիտելու, վերադարձին ոչ պակաս հետաքրքրութեամբ քաջարի դրագունները կը դիտեն Չարդախլուի աւերակները:

Հարկաւոր են արմատական միջոցներ՝ չարիքը վերացնելու համար, հարկաւոր է անաչառ դատարան, արդարադատ դատաւոր ու խիստ պատիժ յանցաւորների համար. քանի որ այդ պատիժը չը կայ, քանի որ Տակայշվիլիների, Ալեաքսիեարների, Սազըլիների (Մէլիք-Ասլանով) պէս սոսկալի յանցաւորները մնում են անպատիժ ու նոյն իսկ պատւի, մեծարանքի արժանանում, հայ ժողովուրդն ինքը պէտք է իր ձեռքում ունենայ միջոցներ պատժելու համար իր թշնամիներին, պատժելու համար վայրագ թաթար ամբոխին, որն այսօր հայութեան պատերազմ է յայտարարել նրան իսպառ կլանելու նպատակով... Հարկաւոր է հասկանալ այդ ու դրա դէմ միջոցներ ձեռք առնել ամենալայն չափերով. ուրիշ ելք չը կայ. գրօշները, աղերսները ու միջնորդութիւնները կոտորածից չեն փրկի...

Յօդուածս պէտք է վերջացնեմ դարձեալ տխուր հաղորդագրութեամբ: Ղարադաղլու հայաբնակ գիւղը, որ գտնվում է Գանձակի տափարակում, Քիւրակ-չայ գետի ափին կողոպտված, աւերված ու հրդեհված է թուրքերի ձեռքով: Ազգաբնակութիւնը մի կերպ ազատվել է շնորհիւ իր կտրիճների ու Գանձակի գաւառապետի օգնական Մարկոս-բէկ Տէր-Աստուածատրեանի, որը միշտ եռանդուն անձնաւորութիւն է, ժողովրդասէր պաշտօնեայ և որը իր կեանքը քանիցս անգամ վտանգի ենթարկելով սակաւաթիւ կազակների ու տեղացի քաջերի օգնութեամբ ղարադաղլուեցի հայերին մի կերպ անց է կացրել Գետաշէն գիւղը: Ղարադաղլուեցիք իրանց շարժական գոյքից կարողացել են վերցնել շատ քիչ բան: [illegible], շէն Ղարադաղլուն այժմս աւերակների մռայլ կոյտ է, միմիայն ոյժով կարելի է յետ խլել ու վերաշինել գիւղը: Ղարադաղլուն իր շրջակայ հարուստ հողերով չը պէտք է ձեռքից բաց թողնել երբէք: Այժմս շրջապատված է թուրք խուժանով Սարով հայաբնակ գիւղը: Ղարադաղլուի վիճակն է սպառնում նրան: Տափարակի գիւղերից ոչ մինը աւերվելուց ապահով չէ այժմս. նրանց դիրքերը շատ վատ են ու թուրք ազգաբնակութիւնն նրանց չորս կողմում շատ խիտ: Դրագունների էսկադրօններ կամ կազակների հարիւրակներ, հաւանական է, կը գնան այդ գիւղերը, դարձեալ աւերակներ դիտելու համար...

Գանձակը «խաղաղ» է ըստ երևոյթին. նոյեմբերի 23-ի գիշերվայ սոսկալի հրացանաձգութիւնից յետոյ, աւելի ուղիղ կը լինի ասել՝ ճակատամարտի, երբ հայ կտրիճներին աջողվեց ցոյց տալ թուրքերին իրանց ոյժը ու նոյն իսկ զգալի ջարդ տալ թուրքերից ամենավատթարներին, բազմանարցիններին, երկու ազգութիւնները գիշեր-ցերեկ կանգնած են իրար դէմ, ինչպէս երկու սպառազինված բանակներ՝ ամեն բոպէ պատրաստ յարձակման ու ընդդիմադրութեան: Հայ կտրիճ զինուորները ոգևորում են ազգաբնակութիւնը իրանց քաջութեամբ ու անձնուիրութեամբ. հայ ազգաբնակութիւնը իր բոլոր յոյսերը դրել է նրանց վրա...

Ս. Տէր-Աւետիքեան

ՔԱՂԱՔԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն քաղաքացիների, որ հայ և միւսուլման հասարակութիւնների զանազան խաւերի ներկայացուցիչների միացեալ ժողովում վերջնականապէս հաստատված է հաշտութեան համաձայնութիւն: Ուստի, ամբողջ ազգաբնակութիւնը, առանց ազգութեան խտրութեան, հրաւիրվում է նպաստել խաղաղութեան ամրապնդման: Որովհետև թէ Թիֆլիսում և թէ ուրիշ քաղաքներում տեղի ունեցած բոլոր ընդհարումների ժամանակ, գրգռողները հանդիսացել են այնպիսի անձիք, որոնք նպատակ են ունեցել իրանց անձնական շահերի համար սերմանել խռովութիւն և առաջ բերել անկարգութիւններ, ուստի սպանութիւն, հրդեհածութիւն և ամեն տեսակ բռնութիւնների ամեն մի առանձին դէպքում անմիջապէս միջոցներ պէտք է ձեռք առնվեն, որպէս զի յանցաւորները կրեն արժանի պատիժ և որպէս զի առանձնակի խռովութիւնները առիթ չը տան խմբական ընդհարումների: Այդ նպատակով ընտրված է մի յատուկ յանձնաժողով, որի կազմի մէջ մտնում են երկու ազգութիւններից վեցական ներկայացուցիչներ: Այդ յանձնաժողովը, մինչև ընդհանուր միջոցներ մշակելը, որպէս զի երկրի զանազան մասերում ծագող ընդհարումների առաջն առնվեն, ընդհանուր-կովկասեան հայ-թուրքական համագումարի ձեռքով, որի գումարումը շուտով պէտք է լինի և որը պէտք է զբաղվէ ամեն մի առանձին դէպքի քննութեամբ և համապատասխան միջոցներ ձեռք առնէ, որպէս զի յանցաւորները պատժվեն: Ուստի խնդրվում է ամենքից, ում թանգ է ընդհանուր անդորրութիւնը, ամեն մի առանձին դէպքի համար՝ տեղեկացնել քաղաքագլխի պաշտօնակատարին, որ յիշեալ յանձնաժողովի նախագահն է: Միայն ազգաբնակութեան բոլոր բարեմիտ տարրերի միաբան աջակցութեամբ հնարաւոր է ձեռք բերել հանգստութեան հաստատութիւնը քաղաքում և թոյլ չը տալ կրկնումը ամենքի համար այն ծանր դրութեան, որի մէջ գտնվում է քաղաքը մի ամբողջ շաբթվայ ընթացքում:

Քաղաքացիներ, աւելի շատ պաղարիւնութիւն, հանդարտութիւն և խոհեմութիւն:

Ի՞ՆՉ ԱՆԵՆՔ

Ի՞նչ անենք, ո՞ւր գնանք:

Ահա հարցմունք, աղաղակ, որ այս բօպէիս դուրս է գալիս ամեն մի հայի բերանից:

Աղաղակ յուսահատական:

Եւ զուր չէ այդ յուսահատութիւնը, ծայրահեղ լքումը:

Հայը կանգնած է շուարած, գլուխը կորցրած, նա, որ տասնեակ դարերով կրել է ամեն տեսակ փորձանք, նեղութիւն, զրկանք. նա, որ տասնեակ դարերով տանջվել, չարչարվել է և սակայն չէ յուսահատել, չէ լքվել:

Ի՞նչ անենք, ո՞ւր գնանք:

Այո, ինչ անենք, ո՞ւր գնանք:

Մենք տեսնում ենք, որ մեզ կոտորում են. մենք տեսնում ենք, որ 9 ամսից ի վեր մի վայրագ, ֆանատիկոս, տարր, թուրք—մօնղօլ տարրը, իրան նպատակ է դրել ջնջել, կոտորել մեզ, քայքայել տնտեսապէս, դուրս մղել մեզ մեր հայրենիքից, մեր օջախից, այն երկրից, ուր ինքն եկւոր է, ուր մենք ապրում ենք հազարաւոր տարիներով, այն հողից, որ մենք պարարտացրել, ոռոգել ենք մեր ճակատի դառն քրտինքով, մեր արիւնով, մեր նախնիքների աճիւններով, ուր մենք ստեղծել, զարգացրել ենք մեր սեփական, ինքնուրոյն կուլտուրան, մեր աշխարհայեցողութիւնը:

Մենք տեսնում ենք, որ մեզ կամենում են բնաջինջ անել: Տեսնում ենք, [illegible] տեսնում ենք, որ ոչ ոք, ոչ մի ձեռք, ոչ մի ոտք, ոչ մի իշխանութիւն չէ աշխատում յետ մղել այն սուրը, որ կախված է մեր գլխին: Տեսնում ենք, թէ ինչպէս տեղական իշխանութիւնները, որոնց աչքի առաջ կատարվում են քամինելի եղեռնագործութիւնները, սոսկալի ոճիրները, սպանվում են երեխաներ, կանայք, հրդեհվում են տներ, յանցաւոր անտարբերութեամբ են նայում այդ բոլոր սարսափների վրա և ոչ մի [illegible], վճռական միջոց ձեռք չեն առնում նրանց դէմ:

Տեսնում ենք, թէ ինչպէս մի նահանգապետ, ընդհանուր նահանգապետ, բարձր իշխանութեան ներկայացուցիչ, գեներալ Տակայշվիլի անունով, որին յանձնվել է մի ամբողջ նահանգի խաղաղացումը, ամբողջ ամիսներ պտտում է գաւառները, գիւղերը, քննում, դատում ոչ իբրև անաչառ դատաւոր, անկողմնակալ իշխանաւոր, այլ իբրև հակառակորդ, թշնամի, շոյում, փայփայում թուրք տարրը, սպանութիւն, հրդեհ, կողոպուտներ, աւարառութիւն կատարող տարրը, խրախուսում, ոգևորում նրանց իր յանցաւոր անտարբերութեամբ, իսկ հայերին, յարձակումներից պաշտպանվողներին բանտարկում, պատժում, էկզեկուցիայի ենթարկում և աշխատում ամեն տեսակ խաբէական խօսքերով, խոստումներով քնացնել:

Տեսնում ենք նաև, թէ, ինչպէս ի լրումն այդ ամենի, նոյն գեներալ Տակայշվիլին, գալով Գանձակ, երկրորդ օրը, նրա ներկայութեամբ սկսվում է սոսկալի կոտորած այդ քաղաքում և նա, հանգիստ տանը նստած, ամբողջ ժամերով, ոչ մի միջոց, ոչ մի հնար չէ մտածում կոտորածի, հրդեհի առաջն առնելու: Տեսնում ենք, թէ ինչպէս, այդ չարագործ (մենք ուրիշ բառ չենք գտնում բնորոշելու քաջ Տակայշվիլու սխրագործութիւնը) գեներալը թոյլ է տալիս իր աչքի առաջ զինուորներին միանալու թուրք մարդասպանների և կողոպտիչների հետ և կողոպտելու հայերի խանութները, այն զինուորներին, որոնք պէտք է կարգ վերականգնեն և հալածեն մարդասպաններին ու կողոպտիչներին:

Եւ այս ամենը հաստատում են պաշտօնական տեղեկութիւնները:

Այո, մեզ համար պարզ է, որ թուրքերը, իրանց վայրագութիւնների մէջ խրախուսվում են հէնց նրանով, որ վստահ են իշխանութիւնների անտարբերութեան մասին և գիտեն, որ ոչ մի պատժի չեն ենթարկվիլ:

Մինչև այսօր մենք չը տեսանք, ոչ մի նահանգապետ, բացի իշխան Նապօլէօնից, որ իր կոչման բարձրութեան վրա կանգնած մնալով, տարրական արդարութեան կշիռը գործադրէր հայերի վերաբերմամբ: Նակաշիձէ, Լիլէև, Ալիխանով, Ֆադէև, Տակայշվիլի—այս անունները յաւիտեան կը յիշեցնեն հայ ազգին և պատմութեան ծայրահեղ անարդարութեան և յանցաւոր իշխանութեան տիպերին:

Մեզ համար պարզ է, որ, ինչպէս շատ ճիշդ կերպով ընդգծում է հոկտեմբերի 18-ի պաշտօնական տեղեկութիւնը, թուրքերի շարժումը շարունակվելու է և Գանձակի զանազան գաւառները նորից դառնալու են արիւնհեղութեան, սրածութեան, հրդեհների թատերաբեմ. նորից խլրտումներ են սկսվելու գուցէ և Երևանի նահանգում, և այս ամենը կատարվելու է, քանի որ, կրկնում ենք, կառավարութիւնը տրամադրութիւն չէ ցոյց տալիս կտրուկ, ազդու միջոցներ ձեռք առնել թուրքերի վայրագութիւնները զսպելու և կարգ ու խաղաղութիւն հաստատելու համար:

Ուրեմն մենք մնացել ենք և պէտք է մնանք անօգնական, անպաշտպան:

Ոչ միայն իշխանութիւնները մեզ չեն օգնում, ոչ միայն չարագործ Տակայշվիլիները, արժանաւոր յաջորդներ Նակաշիձէների, խրախուսում են թուրքերի հրոսակութիւնները, սրածութիւնը և վայրագութիւնները, այլ մենք, մեր յուսահատութեան, լքման, մեր անյուր աղէտների բօպէին բարոյական ոչ մի խրախուսանք, քաջալերութեան, մխիթարութեան ոչ մի նշոյլ չենք գտնում մեր հարևանների մէջ:

Մենք լքված ենք, երեսի վրա ձգված ամենքից և ամեն կողմից:

Մենք չունենք ոչ մի օգնական, պաշտպան:

Բնականաբար, մենք հարցնում ենք.

Ի՞նչ անենք, ո՞ւր գնանք:

Մեր անելիքը պարզ է. չը պէտք է յուսահատվել, չը պէտք է լքման ենթարկվել: Ամենամեծ վտանգի բօպէին, երբ մարդ տեսնում է, որ վերջին ճիգը պէտք է թափէ իր կեանքը, գոյութիւնը փրկելու համար, փրկութեան միակ ելքը՝ պաղարիւնութիւնն է: Արդ, մեր վերջին ճիգը պէտք է թափենք. ձեռք առնենք միակ միջոցը, որ ներկայումս հնարաւոր և իրագործելին է. ամբողջ ժողովրդով պատրաստվենք, դիմենք ինքնապաշտպանութեան:

Կազմակերպվենք ինքնապաշտպանութեան համար:

Եթէ չը կարողանանք փրկվել. գոնէ կը մեռնենք պատւով:

Մեր փրկութիւնը, յոյսը մեր սեփական ոյժերի վրա դնենք:

Եւ որովհետև մենք արդար ենք, մենք անմեղ ենք, մենք միայն պաշտպանում ենք մեր կեանքը, մեր գոյքը, մեր պատիւը, հաւատանք, որ կարող կը լինենք պաշտպանվել և փրկվել:

Ուրեմն, ինքնապաշտպանութիւն, ուրեմն օգնութիւն, աջակցութիւն, ինքնապաշտպանութիւնը կազմակերպողներին: Հ. Ա.

ԶՈՒՇԱՆԱ՛ՆՔ

Ռուսական «հանգուցեալ» ռէժիմի գնահատելի «արժանաւորութիւններից» մէկն էլ այն էր, որ նա ամեն տեղ և ամեն բանում ուշանում էր: Եապօնական պատերազմի ժամանակ ռուս ժողովուրդը և մամուլը առանց փրփուրի չէին կարողանում խօսել այդ ուշացման մասին և զօրքի բոլոր անյաջողութիւնները վերագրում էին նրան միայն։ Իմ կարծիքով, ժողովուրդն էլ, մամուլն էլ սխալվում էին. կառավարութեանը իրաւունք ունէր հետեւել այն իմաստութենը, որ դարերի ընթացքում սրբագործել է ինքը ռուս ժողովուրդը «тише ѣдешь, дальше будешь» առածով։ Այն ժամանակ ես արդարացնում էի կառավարութեան բոլոր «ուշացումները», աչքի առաջ ունենալով, որ «հօտը արժանի է իր հովւին»։ Սակայն իմ մտքից անգամ չէր կարող անցնել, որ մի կառավարութիւն կարող է հարիւր տարի, ուղիղ հարիւր տարի, մտածել մի ծրագրի մասին, կարող է մի ամբողջ դար չափելու ձեւել և կըտրելու կրիտիկական րօպէին այնուամենայնիւ ուշանալ... Համաձայնուեցէք, որ այդ կառավարութիւնը մի անզուգական արտիստ է և նրա ընդունակութիւնների առաջ պէտք է պատկառանքով ծունկ խոնարհել։ Եթէ մի հրաշքով կարողանային կենդանանալ Ալէքսանդր I և Սպերանսկին, այսինքն, նրանք, որոնք մի դար առաջ արդէն ծրագրել էին ռուսական սահմանադրութիւնը, ես համոզված եմ, որ չէին հրաժարվի խորին ակնածութեամբ և պատկառանքով թեքելու իրանց գլուխները Բուլիգինի, կոմս Սօլսկու և Վիտտէի առաջ, որ այս պետական հանճարները կարողացել են հարիւր տարի առաջ ծրագրված սահմանադրութիւնը վերջապէս լոյս աշխարհ հանել... Ի՞նչ անենք, որ ռուս առաջադիմականները պատռում են թղթերը՝ աղաղակելով թէ ուշ է, քիչ է, անկատար է, պէտք էր աւելի կատարելագործված տալ։ Չէ՞ որ ներկայ կառավարութիւնն էլ ունի իր արդարացուցիչ պատճառները. հապա հարիւր տարի յետոյ ի՞նչ պիտի տան ապագայ Վիտտէները ժողովրդին, եթէ իսկական սահմանադրութիւնը տալու լինեն հիմա. մի՞ գուցէ այն ժամանակ ուղիղ որ ժողովուրդը պահանջէ այն, որ այժմ պահանջում է ինտելլիգէնտների և բանւորների մի համեմատաբար փոքրիկ խմբակ և որի անունը միայն սարսափ է ազդում Վիտտէների վրա։

Սակայն, ինձ թւում է, որ կառավարութիւնն իր խորիմաստ քաղաքականութեան մէջ մի քիչ սխալվում է. թւում է, որ ուշացման ճարպիկ խաղը չէ կարող միշտ յաղթանակներ տանել նոյն իսկ ռուս ժողովրդի մէջ։ Այդ խաղը չափազանց թանգ է նստում ոչ միայն տամբօվլի տրեխաւորին, այլ նաև այն ազգերին, որոնց վիճակը, պատմական չարաբախտ հանգամանքների շնորհիւ, կապված է ռուս ժողովրդի հետ և որոնք անընդհատ կողքից բոթում են նրան։ Ասենք, տամբօվլի տրեխաւորի կաշին անչափ հաստ է և գանգը անչափ կարծր. բայց և այնպէս նա էլ չը կարողացաւ դիմանալ անվերջ «ուշացման» քաղաքականութեան և վեր կացաւ բողոքելու իր անտանելի դրութեան դէմ։ Ուղիղ է, բողոքի եղանակը փոքր ինչ տարօրինակ է. նա այրում ու կործանում է ամբողջ գաւառներ ու նահանգներ. նա աւերում է իր իսկ հայրենիքը. նա չէ ջոկում բարեկամը թշնամուց և հաւասարապէս քարուքանդ է անում ամեն ինչ. նա սպառնում է հիմնայատակ անել ամբողջ Ռուսաստանը և արեան մէջ թաղել թէ ուշացողին և թէ առաջ անցնողին։ Բայց ո՞վ է մեղաւոր, բողոքի այլ եղանակ ո՞վ սովորեցրեց նրան։ Ռուրիկի օրերից մինչև հիմա կառավարութիւնը լոկ խոստումներով է կերակրել նրան և երբեք լրջօրէն չէ մտածել նրա դատարկ որովայնի, նրա քայքայված անտեսութեան, նրա փլվող տան մասին... Սովից կատաղած գազանը հիմա արթնացել է իր դարաւոր թմրութիւնից և վառել է մի սոսկալի կործանարար խարոյկ... Ո՞վ է մեղաւոր։

Մի՛ ուշանաք...

—

Սակայն կամաց-կամաց շարժվելու և ուշանալու քաղաքականութիւնը քանդում է ոչ միայն կառավարութիւնների, այլ և ազգերի տունը։ Առանձնապէս նա վտանգաւոր է մանր ազգութիւնների համար, որոնց տունը աւերելու ձգտում են ամենքը, և մերձաւորը, և հեռաւորը, և փոքրը և մեծը... Կրկնապատկված եռանդով աւերիչները աշխատում են մանաւանդ այնպիսի տների վրա, որոնց կտուրը ծակ է, պատերը խախուտ, քարերը տեղ-տեղ թափված ու ընկած հեռու-հեռու միմեանցից։ Դժբախտաբար, մեր հայրերը ապրում էին հէնց այդպիսի տան մէջ և աշխարհաւեր որոտ—անձրևի, հողմ ու փոթորկի ժամերին, երբ տունը շարժվում էր հիմքից, գիտէին մի բան միայն,—

Ամեն ինչ յանձնել Աստուծոյ կամքին, ծոմ ու պաս պահել, հսկումներ անել, աղօթել...

Եւ աղօթեցին մինչև այն ժամանակ, երբ տունը մաս առ մաս սկսեց կործանվել և իրանք մի հրաշալի օր մնացին բաց երկնքի ու փայլուն աստղերի տակ։ Հեռաւոր և մերձաւոր երկրներից եկած մարդիկ ու գազաններ բաժանեցին նոյն իսկ տան տեղն իրանց մէջ, շինեցին նոր շինութիւններ և նստան այնտեղ, իբրև իշխաններ, իսկ տան նախկին բնակիչները...

Նրանք կուչ եկան իրանց սեփական հողի վրա, բայց ուրիշի տան մէջ, խոր ու մութ անկիւններում, իբրև հլու-հպատակ ծառաներ, կորցրին ու մոռացան ամեն ինչ, որ առաջ այնքան սիրելի ու թանգ էր իրանց համար, բայց չը կարողացան մոռանալ մի բան միայն.

Վտանգի ժամին ամեն ինչ յանձնել Աստուծոյ կամքին, ծոմ ու պաս պահել, հսկումներ անել, աղօթել...

Ու թող լուռ-մունջ աղօթէին ամենքը միասին, ո՛չ. նրանք սկսեցին վիճել ու կռւել իրար հետ, թէ ո՞ւմ աղօթքն է արդիւնք հաճելի և ինչպէս պէտք է ասել «Սուրբ Աստուածը»—ի դէմս Հօր թէ Որդու...

Ուշ, շատ ուշ, վերջին տարիներս միայն, նրանց դժբաղդ յետնորդները հասկացան, որ աղօթել իմանալը առաքինութիւն չէ, որ տունը կանգուն և ազատ պահելու համար յափշտակութիւնից, հարկաւոր է մոռանալ և ծոմ, և պաս, և աղօթքն՝

Ու զինվել, զինվել պաշտպանվելու համար։ Հասկացան, բայց ե՞րբ...

Երբ դանակը հասաւ ոչ թէ ոսկորին, այլ ոսկրի ուղեղին...

Մի՛ ուշանաք...

—

Օ՜, ուշանալու առաքինութեան մէջ հայի նոր սերունդն էլ ամենևին յետ չի մնայ հին «սալմոսերգու» սերնդից։ Կամենու՞մ էք ապացոյց։

Ահա՛։

Երբ Բագուի փետրվարեան արիւնոտ ապտակը ցնցեց Կովկասեան ամբողջ հայութիւնը՝ մենք ամենքս վեր թռանք տեղերից, սկսեցինք ժողովվել, խօսել, վիճել, ապացուցանել միմեանց, որ մեր գոյութիւնը վտանգի մէջ է, որ փրկութեան յոյս չը կայ ոչ մի կողմից, որ մեր միակ յոյսը պէտք է լինի մեր զէնքը—ինքնապաշտպանութեան միակ միջոցը կատաղած գրաստների և կեղծ, երկերես, իր շահն և օգուտը չը հասկացող և մեզ դիտմամբ ի կորուստ մատնող կառավարութեան դէմ։ Ամենքն ըստ երևոյթին հասկացան, որ մահուան օրհասական ժամին լաւ է մեռնել փառքով, զէնքը ձեռքին, քան անփառունակ մորթոտվել, իբրև ոչխար, և իբրև շուն՝ ձգվել փողոցները։ Ամենքն ըստ երևոյթին հասկացան, որ ինքնապաշտպանութիւնը մի անխուսափելի պարտաւորութիւն է ամեն մի հայի համար ներկայ հանգամանքներում, որ պէտք է զինել ամեն մէկին, որ ընդունակ է զէնք կրելու, զինվել ազգովին, առանց բացառութեան, առանց հաշւի առնելու ունեւորին կամ չունեւորին...

Վճռեցինք։

Անցան փետրվարից յետոյ երկար ամիսներ, եկան աւելի դաժան օրեր, որոնք պէտք է մեզ դրդէին շտապել իրականացնելու ինքնապաշտպանութեան գործը, բայց մենք...

Մենք ծալեցինք ձեռքերս և այդ հսկայական համազգային գործը հանգիստ խղճով բարդեցինք մի համեմատաբար փոքրիկ կազմակերպութեան ուսերի վրա, որ գուցէ կարող էր ձգտել շատ բանի, բայց հասնել շատ քչին միայն...

Յանձնեցինք ու քնեցինք...

Բայց ի՞նչ կը լինի մեր դրութիւնը, եթէ վաղը, ինչպէս գուշակում են չարագուշակ, բայց հեռատես անձինք, Ռուսաստանում և նրա հետ միասին Կովկասում տիրէ աւելի վատթար անիշխանութիւն, քան այժմեան անիշխանութիւնը... Մտածե՞լ էք դուք այդ մասին։ Նոր միայն զարթնած՝ մենք կանգնած չէ՞նք լինի բիւրաւոր թշնամիների առաջ անզէն-անպաշտպան...

Եւ ո՞վ կը փրկէ մեզ այն ժամանակ անխուսափելի կորուստից։

Հայութեան օրհասի սոսկալի ժամին մենք զարհուրանքով չէ՞նք հառաչի այն ժամանակ։

Ուշացանք, ուշացանք...

Մի՛ ուշանաք...

—

Եւ որքան ուշացել ենք մենք, հայերս, ոչ միայն ինքնապաշտպանութեան գործում, այլ նաև ուրիշ ասպարէզներում... Ինչ անգին զանազանութիւն մեր և պետութեան այլ ծայրամասերի կուլտուրական ազգերի մէջ։ Ինչպիսի սար ու ձոր, օրինակ, մեր և ֆինլանդացիների, մեր և լեհերի, մեր և լիտովցիների, մեր և լատիշների մէջ... Այն ինչ մենք յաւակնութիւն ունենք ոտք մեկնելու նրանց հետ և հաւասարապէս դասվելու նրանց շարքը։

Մեր կուլտուրական շնորհքն և ընդունակութիւններն ուրացող պարոններն անշուշտ կասեն. «Է, ինչպէս կարելի է կողք-կողքի դնել և դատավճիռ կարդալ երկու այնպիսի մեծութիւնների վրա, որոնք երբեք չեն կարող համեմատվել միմեանց հետ. կան պատմական հանգամանքներ, կայ երկրի աշխարհագրական դիրք, կան ազգերի անսայթաք առաջխաղացութեան առաջ դրված անթիւ արգելքներ կան... կան... և այլն։

—Գիտեմ, գիտեմ, պարոններ, կան, կան. բայց ասացէք, իւրաքանչիւր ազգ իր պատմական կեանքի հսկայ շինութիւնը կառուցանելու, իր առաջխաղացութեան ուղին գծագրելու և իր ապագայ ճակատագիրը նախորոշելու մէջ ինքն էլ մասնակցում է, որպէս մի գործօն, թէ ոչ։

Հա, հէնց բանը դրանումն է. եթէ մենք մեր պատմական անցեալի վերաբերմամբ կատարէինք ուժեղ գործօնի դեր, եթէ չը լինէինք նախանձոտ, եսասէր և, մի բուռն երկրի մէջ չը ստեղծէինք միաժամանակ մանր, միկրօսկօպիքական, միմեանց դէմ մրցող, միմեանց աւերող ու կործանող իշխանութիւններ, նախարարութիւններ և թագաւորութիւններ, եթէ չը լինէինք թուլամորթ ու շուտ վհատվող և ամեն մի պատմական ձախող հանգամանքից յետոյ՝ չը թողնէինք մեր հայրենիքն ու չը ցրուէինք աշխարհի չորս կողմը, եթէ չը լինէինք թանձրամիտ և անհեռատես ու աշխարհական գիտութիւնն և իշխանութիւնը չը զոհէինք կրօնականին, այն ժամանակ, գուցէ, և մեր պատմութեան ընթացքն ուրիշ կը լինէր, մենք կարօտ չէինք լինի այս րօպէիս ոչ Ռուսաստանի ու նրա պաշտպանութեանը և ոչ նախանձով կը նայէինք այժմ ֆինլանդացուն, լեհացուն և միւսներին...

Ո՞վ է մեղաւոր, որ մենք գաղափար չունենք ցեղային համերաշխութեան մասին և պատրաստ ենք իրար միս կրծել նոյն իսկ ծանր, տագնապալից ճգնաժամերին։

Ո՞վ է մեղաւոր, որ մենք մեր հազարամեայ բնագաւառներում, մեր սեփական երկրի մէջ չունենք մի որոշ, հաստատուն յենակէտ և չենք կարող ուրիշների նման հպարտութեամբ ասել. «ահա մենք և մեր երկիրը»...

Ո՞վ է մեղաւոր, որ մենք հալածում էինք իսկական գիտութիւնը, զինվում էինք առաջադէմ տարրերի դէմ ու դարերի ընթացքում մնում իբրև տիրացու ժողովուրդ, իբրև կրօնական համայնք։ Եւ նոյն իսկ այժմ, մեր օրերում, մենք չէ՞նք մեղաւոր, որ չենք կարողանում մեր նորաբոյս դպրոցները խլել կրօնականների ճանկերից ու հին մամռոտած սեղանի տեղ՝ կանգնել այնտեղ նոր սեղան նոր Աստուած պաշտելու համար...

Ոչ. մեր կուլտուրական ընդունակութեան խնկարկու ապոլոգէտներին երբեք չի աջողվի ապացուցանել, որ հայը միշտ ձգտել է առաջ գնալ և եթէ արգելքների է հանդիպել այդ ճանապարհի վրա, մեղաւորը միմիայն եղել են պատմական հանգամանքները։

Այո, եթէ կամենաք, պատմական հանգամանքները... բայց իրան հային ևս նրա բարոյական և մտաւոր ամբողջ էութեամբ խոթեցէք այդ պատմական հանգամանքների մէջ և համարեցէք նրանցից մէկը, այն ժամանակ համաձայն եմ ձեզ հետ. և այն ժամանակ կասեմ, ուղիղ է, հայը ձգտել է առաջ գնալ, բայց միշտ [illegible], միշտ դանդաղ, ոչ բաւականաչափ զօրեղ թափով ու միշտ ուշացել է, ուշացել... ու հասել այսօրվայ դրութեան...

—

Սոսկալի դրութիւն... Մէկը միւսի ետևից այրվեցին մեր գիւղերն ու քաղաքները և վտանգն այժմ սպառնում է մնացածներին

Ո՞ւր է հայութիւնը։

Ինչո՞ւ մեր թշնամիները կարողանում են հազարաւոր յարձակվողներ հանել մի օրում, իսկ մենք... տասնեակ պաշտպանվողներ միայն...

Հանգե՞լ է արդեօք մեր մէջ հերոսական քաջութեան վերջին կայծն անգամ, դարերի ստրկութիւնը ջնջե՞լ է արդեօք մեր սրտից ազնիւ զգացմունքներ և թողել այնտեղ մի սեւ դատարկութիւն միայն, ու՞ր հարազատ եղբօր օգնութեան ճիչն անգամ արձագանք գտնել չէ կարողանում։ Գուցէ զզուել ենք ապրել, իբրև հայ։

Ո՛չ, ո՛չ, մռայլ մտքեր—արդիւնք յուսահատութեան վայրկեանի...

Օ՜, ես հաւատում եմ հայի կենսունակութեան. մենք դեռ կապրենք, մենք դեռ կը կռւենք, մենք վաղ-ուշ կը լուծենք մեր վրէժը «պատմական հանգամանքներից», միայն թէ

Այս անհուն ճգնաժամին միանանք, միանանք,

Թողնենք օտարին թաղելու իրանց մեռելները,

Կենտրոնանանք մեր անձնական գործի վրա, հրաժարվենք անմիտ-անխորհուրդ ձգտումներից, որոնք հեռու ապագայում մեզ դրախտ են խոստանում, իսկ ներկայումս՝ գերեզման,

Պինդ սեղմենք իրար ձեռք

Ու, որ ամենից գլխաւորն է,

Չուշանանք, չուշանանք...

Ա. Մխիթարեան

ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹԻՒՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴՐՕՇԱԿԻ ՏԱԿ

—

Հէնց որ միայն գործը անցաւ զինուորական քննիչի ձեռքը, ասպարէզ եկան կամաւոր վկաները։ Նախ՝ խուզարկու (СЫЩИКЪ) Սարէլկով, որը յայտնեց, որ իշխան Նակաշիձէի սպանութիւնից յետոյ շուտով նա ինքն լսեց, թէ ինչպէս բանւորների ժողովում հայ Գեօրգի Մէյրամօվը, 22 տարեկան, պարծենում էր, որ հէնց ինքն է ռումբ գցել նահանգապետի վրա։ Երկրորդը, մի ուրիշ լրտես, Լէվին, ցոյց տուեց, որ հայ Սիմէօն Զալալեանց, 33 տարեկան, ինքն խոստովանեց նրան, որ ռումբը գցել է նա... Որպէս յայտնի է, իշխան Նակաշիձէի վրա գցված էր միայն մի ռումբ, իսկ այդտեղ երկու խուզարկու-լրտեսներ, անհաշիւ եռանդ ցոյց տալով, գըտան մինչև անգամ երկու ռումբ...

Այդ ժամանակ Բագու եկան սպանված իշխան Նակաշիձէի երկու եղբայրները,—մէկը նրանցից Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրոնցով-Դաշկովի բոլոր գործերի կառավարիչն է,—և սկսեցին հարց ու փորձ անել թուրքերին. ասում են, որ Բագուի մզկիթում նրանք կրակոտ կոչ արին թուրքերին գտնել նահանգապետի սպանողներին։

Եւ ահա, հանգուցեալի եղբայրների մօտ եկան երկու թուրք—Քերբալայ-Ալի-օղլի և Ագալի Միկայիլ օղլի և յայտնեցին, որ նրանք ականատես էին իշխանի սպանութեան և կարող են ճանաչել սպանողներին։

Այն ժամանակ, խախտելով մեզ մօտ գոյութիւն ունեցող օրէնքները, տեղական ոստիկանապետը իր ստորագրութեամբ պաշտօնական թուղթ տուեց այդ թուրքերին, որով նրանց իրաւունք էր տրվում ձերբակալել բոլորին և իւրաքանչիւրին։ Թուրքերը, քննիչի լիազօրութիւններ ստանալով, իմանալով այն, որ երկու հոգի արդէն ձերբակալված են, լըսած լինելով, որ բոլոր մարդասպանները հինգ հոգի էին, երեք օր ու գիշեր թրև եկան Բագւում և ձերբակալեցին իշխան Նակաշիձէի էլի երեք «սպանողների»—պարսկահպատակ Պետրոս Սահակեանցին, 25 տարեկան, և հայ Լևոն Ցարութիւնովին, 25 տարեկան, և 16 տարեկան տղայ Մինաս Ազատեանցին։

Այդ կերպ ներկայացաւ գործը զինուորական դատարանի առջև օգոստոսի 18-ին։ Վկայ Սարէլկով չեկաւ նիստին, որովհետև նրան չէին գտել (ժանդարմեան-ոստիկանական լրտես —և չէին գտել։) Զինուորական դատախազութեան ներկայացուցիչը անհաշտ հակասութիւն նկատելով Սարէլկովի և ուրիշ վկաների ցուցմունքների մէջ, խնդրեց դատարանին հրաւիրել հարց ու փորձի համար զինուորական քննիչ գնդապետ Դուբրովսկուն, որը շատ կարելի է, կը հաւաստիացնէր, որ հակասութիւնը այն բանից է առաջ եկել, որ նա, քննիչը, անճշտօրէն է արձանագրել Սարէլկովի ցուցմունքը (լաւ չէ՞)։ Պաշտպանները բողոքեցին, բայց դատարանը որոշեց կանչել գնդապետ Դուբրովսկուն և յետաձգել գործը։

Բագուի գեներալ-նահանգապետ Ֆադէևի թոյլտւութեամբ, «Баку» լրագրի 104 և 105 համարներում տպվեց այդ գործի մեղադրական ակտը, որ քննվում էր դռնփակ։

Սեպտեմբերի 26-ին սկսվեցին նոր նիստերը այդ գործի վերաբերմամբ։ Զինուորական դատախազի կողմից արդէն մէկ ուրիշ ներկայացուցիչ կար։ Պաշտպանները միջնորդեցին նիստի դռները բանալու մասին։

Նախագահ. Գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ օգոստոսի 8-ին, գործը պէտք է քննվի դռնփակ։

Պաշտպանները մատնացոյց են անում, որ օգոստոսի 18-ին գեներալ-նահանգապետը թոյլտւութիւն տուեց տպել այդ գործի հաշիւը, որ զինուորական դատավ. կանոնադ. 790-դ յօդուածը թոյլատրում է դռները փակել միայն «ակներև անհրաժեշտութեան դէպքում», որ այժմ այդ անհրաժեշտութիւնը չը կայ, և որ, վերջապէս, գործը լրագիրներում հրատարակելուց յետոյ, նիստի դռները փակելու համար պէտք է որ երկրորդ որոշում լինի։

Նախագահ. Այդպիսի որոշում կայ։

Միայն յետոյ, աչքի անցկացնելով գործը, պաշտպանները, ի զարմանս իրանց, երևան հանեցին, որ այդպիսի որոշում ամենևին չէ եղել։

Աւելի ևս զարմացան պաշտպանները, երբ, կարդալով այդ գործի պատճառաբանված դատավճիռը, նրանք հանդիպեցին ցուցումների Սարէլկովի գրաւոր յայտարարութեան վրա այն մասին, որ զինուորական քննիչը անկանոն է արձանագրել իր ցուցմունքը։ Այդ յայտարարութիւնը չը կարդացվեց դատարանում և գաղտնիք էր մնացել պաշտպանների համար, բայց որը, այնուամենայնիւ, դրվել էր որպէս հիմք մեղադրական դատավճռի։ Բանից դուրս եկաւ, որ «չը գտնված» լրտես Սարէլկովը անձամբ է ներկայացրել իր գրաւոր յայտարարութիւնը (առանց ծրարի) պրոկուրօրին կամ դատարանին, և դատարանը ծածկել է այդ նշանաւոր դոկումէնտը պաշտպաններից, առանց ստուգման թողնելով նրան և հարց ու փորձի չենթարկելով «չը գտնված», բայց երդումով յայտնող լրտեսին։

Թէ որքան «անվարի» էր տարվում այդ գործի դատաստանական քննութիւնը, երևում է հետեւեալ հանգամանքներից։

Չնայելով այն բանին, որ օգոստոսի 19-ին մուծված էր արձանագրութեան մէջ պաշտպանների յայտարարութիւնը, թէ օրէնքով քննիչը իր կատարած հարց ու փորձերի միայն արտաքին հանգամանքների մասին կարող է ցուցմունքներ տալ դատարանում, այնուամենայնիւ, գնդապետ Դուբրովսկին ցուցմունքներ էր տալիս դատարանում հէնց ըստ էութեան գործի։

Երբ պաշտպանը որ և է յայտարարութիւն էր անում, զինուորական պրոկուրօրը ընդհատում էր նրան. պաշտպանը բողոքում էր դրա դէմ և խնդրում էր նախագահին ցոյց տալ պրոկուրօրին բացատրութիւնների օրինական կարգի վրա։ Նախագահը բաւականացաւ նրանով, որ թոյլ տուեց պաշտպաններին նոյնպէս ընդհատել պրոկուրօրին, եթէ նա անկանոն պնդումներ կանէ։

Վկան, ժանդարմների ունտէր-օֆիցէր Կարպ Կովալենկօ, սկսեց ասել, թէ իրան անճշմարտանման երևաց Սարէլկովի պատմութիւնը այն մասին, որ իբր թէ Մէյրամօվ բազմամարդ ժողովում պարծենում է նահանգապետի սպանութեամբ։

—Ի՞նչ ես խառնում, ընդհատեց նրան պրոկուրօրը։

Պաշտպանների բողոքը այդ առիթով նախագահը անուշադիր թողեց։

Պաշտպանները իր ժամանակին միջնորդեցին այն մասին, որ դատարանը իր լիակատար կազմով գնայ տեսնելու յանցանքի տեղը։ Նախագահը խոստացաւ, և պաշտպանները սպասում էին այդ գնալուն։ Շատ էր անցել թէ քիչ ժամանակ դրանից յետոյ,—դատարանի անդամը, տեղի յատակագիծը աչքի անցնելու ժամանակ նիստում, նկատելով պաշտպանին, թէ նա, յատակագծի վերաբերմամբ արած ցուցմունքներից մէկի վերաբերմամբ արդար չէ, բերանից թռցրեց. «Իսկ մենք (դատարանի մի քանի անդամները) երէկ, նիստի ընդհատման ժամանակ, եղանք սպանութեան տեղի վրա և հարց ու փորձ արինք մի քանի անձանց...»։

Իմանալով դատարանի կողմից եղած նոր ապօրինութիւնը, պաշտպանները խնդրեցին արձանագրութեան մէջ մտցնել այն բոլորը, որի մասին դատաւորներից մէկը անզգուշաբար կերպով բերանից թռցրել էր։ Նախագահը համոզում էր պաշտպաններին ասելով, թէ դա նշանակութիւն չունի.—Էհ, անցնում էինք, էհ նայեցինք, ի՞նչ կայ,—և հրաժարվում էր արձանագրութեան մէջ մտցնել այն խօսքերը թէ սպանութեան տեղի վրա արտաքոյ դատարանական կարգի հարցափորձի են ենթարկված մի քանի անձինք։

Վերջը երևաց, որ այդ էպիզօդը բոլորովին բացակայում է նիստի արձանագրութեան մէջ, թէպէտև պաշտպանները թելադրում էին իրանց յայտարարութիւնները, իսկ նախագահը, ըստ երևոյթին, արձանագրում էր։

Կարծում եմ, որ այդ մի քանի էպիզօդներն ևս շատ բաւական են ընդունելու համար, որ Բագուի զինուորական դատարանում կայացած դատավճիռը ոչինչ ոչ իրաւաբանական, ոչ բարոյական ոյժ չէ կարող ունենալ, բայց «վկաներին» բնորոշելու համար մեղադրութեան կողմից աւելորդ չէ այդ գործի մասին պատմել հետևեալն ևս։

Երկու վկաների ցուցմունքով, դատարանում, նրանք իրանց տեսան թէ ինչպէս Զալալեանցը ռումբ գցեց իշխան Նակաշիձէի վրա։ Միկայիլ-օղլին աւելացրեց, որ այդ միջոցին Մէյրամօվը ոչ-հեռու խօսում էր մրգավաճառի հետ ռուսերէն. երբ այդ մրգավաճառին գտան, բանից դուրս եկաւ, որ նա ամենևին ռուսերէն չէ խօսում։

Արդէն այդ գործը վերջանալուց յետոյ պաշտպանները կատարելապէս ճիշտ աղբիւրից իմացան, որ նոյն այդ Միկայիլ-օղլին նորերս ինքն էր մեղադրվում սպանութեան մէջ. սպանվել էր ակցիզային պաշտօնեայ. գործը մութն էր, ոչինչ հետքեր չը կային. քննիչի մօտ եկաւ Միկայիլ-օղլին և յայտնեց, որ ինքն տեսաւ թէ ինչպէս այս ինչը (ազգանունը չեմ յիշում) սպանեց պաշտօնեային, քննիչը ձերբակալեց նրան, բայց շուտով արձակվեց, որովհետև կատարելապէս հաստատվեց նրա alibi-ն, իսկ Միկայիլ-օղլին իր պատմութեան մանրամասնութիւններով մատնեց իրան այնքան, որ ինքն դատի կանչվեց, որպէս մեղադրեալ և բանտն էր նստած, բայց դատարանը նորերս արդարացրեց նրան փաստերի բացակայութեան պատճառով։

Ահա որպիսի վկաների վրա էր յենվում Բագուի զինուորական դատարանը, որը յայտարարեց մահվան չորս դատավճիռ և երկարատեւ տաժանակիր աշխատանք 16 տարեկան մի տղայի։ Բագուի գեներալ-նահանգապետը դատից յետոյ յայտնեց պաշտպաններից մէկին, երդուեալ հաւատարմատար Ա. Ս. Զարուդնին, որ նա կասկածում է դատապարտվածների մեղաւորութեան մասին։

Զինուորական գլխաւոր դատարանի վրա կրկնակի պարտաւորութիւն է դրվում, ոչ միայն փոխել ակներև անկանոն դատավճիռը, այլ և դատի ենթարկել բոլոր մասնակիցներին [illegible] այն այլանդակութեան որ տեղի ունէր Բագւում «զինուորական դատարանի» դրօշակի տակ։

Դատաստանական գլխաւոր ինստանցիան պարտաւոր է վերջապէս բացատրել բոլոր զինուորական—դաշտային դատարաններին, որ իր՝ բարձրագոյն դատարանին՝ համար ես մի և նոյն չէ, երբ մահվան դատավճիռը թխված է պահպանելով դրա համար սահմանված կանոնները, կամ մահվան դատավճիռը մատուցվում է կառավարութեան, ոտնակոխ անելով նոյն իսկ պատերազմական ժամանակի օրէնքները։

Օլէգ

«Бирж. Вѣд.»

ԵՐԿՐՈՐԴ ՍԵՎԱՍՏՕՊՕԼԸ

—

Առաջինը 50 տարի առաջ էր։ Անգլիական, ֆրանսիական, սարդինական և թիւրքական միացած բանակները վերցնում էին Սեվաստօպօլը։

Այժմ—երկրորդ Սեվաստօպօլն է։ Այժմ օտար ազգերի արշաւանք չը կայ։ Սև ծովի այդ բազմահոյակ նաւահանգստում, ինչպէս գիտեն մեր ընթերցողները, կատարվում էր ռուսաց յեղափոխութեան մի ահաւոր արարուածը։ Նա առաջացրեց զարհուրելի եղբայրասպան պատերազմ։ Մենք բոլորովին զըրկված ենք հեռագրական և պօստային հաղորդակցութիւններից, բայց երկու մայրաքաղաքների մամուլը համեմատաբար բախտաւոր դրութեան մէջ է. նա շարունակում է ստանալ գործակալական հեռագրեր։ Այնտեղ տպված են և մի շարք պաշտօնական հեռագրեր, որոնք ներկայացնում են «երկրորդ Սեվաստօպօլը» հետևեալ պատկերով։

Ապստամբութիւնը գլխաւորապէս ծովային զինուորների մէջ էր տարածված։ Նրան մասնակցում էին նոր շինած «Օչակով» կրէյսէրը, «Պանտելէյմօն» (նախկին «Պօտեմկին») զրահաւորը և երեք ականանաւեր։ Լէյտենանտ Շմիդտը «Օչակովի» վրա բարձրացրեց ազդանշան. «Էսկադրայի հրամանատարութիւնը իմ ձեռքն եմ առնում»։ Դա յեղափոխական ապստամբութեան հրամանատարն էր։ Ահա ինչ է հեռագրում կառավարութեան՝ հրամանատար ծովապետ Չուխնին, նոյեմբերի 16-ին.

«Ենթադրվում էր գործը վերջացնել 15-ին առանց արիւնահեղութեան, շրջապատելով նաւաստիների դիվիզեան զօրքերով, առաջարկելով նրան անպայման անձնատուր լինել։ Բայց ապստամբները սկսեցին յարձակողական գործողութիւններ 14-ին լոյս 15-ը, ձեռք գըցելով «Սվիրէպի» ականանաւը և երեք ուրիշները, որոնք և մօտեցան «Օչակովին»։ Այդ բոլոր նաւերը և «Օչակովը» բարձրացրին կարմիր դրօշակներ, իսկ յետոյ «Օչակովի» վրա երևաց ազդանշան. «Նաւատօրմի հրամանատարն է Շմիդտը»։ Յետոյ Շմիդտը «Սվիրէպի» ականանաւի վրա անցաւ էսկադրայի առջևով «ուռա» կանչելով, բայց էսկադրայից պատասխան չը ստացաւ. յետոյ մօտեցաւ նաւահանգստին և ազատեց իր կալանաւորածներին։ Ապստամբեան նաւաստիների զինված խմբեր շարունակում էին գրաւել փոքրիկ նաւերը, որոնք կանգնած էին նաւահանգստի մօտ առանց իրանց մարդկանց և չունենալով զինուորական պաշտպանութիւն։ Ճաշի ժամանակ զինված խմբեր մակոյկներով «Օչակովից» գնացին «Պանտելէյմօն» զրահակիրը, որի վրա զէնք չը կար, և ձերբակալելով օֆիցերներին, տարան «Օչակով»։ Հարկաւոր եղաւ ակամայ թոյլ տալ, որ ապստամբները այդպիսի բաներ անեն, որովհետև նաւատօրմը 7-րորդ կորպուսի հրամանատարի պահանջով զինաթափ էր արված, ի նկատի ունենալով, որ նաւաստիների վրա յոյս դնել չէր կարելի։ Կէսօրից յետոյ ապստամբների յարձակողական գործողութիւնները սաստկացան։ Նրանք միմեանց ետևից գրաւեցին Հարաւային ծովախորշի երկարութեամբ կանգնած նաւերը և բարձրացնել կարմիր դրօշակներ։ Ենթադրված ծրագիրը պէտք եղաւ փոխել և դիմել վճռական գործողութիւնների՝ դրութիւնը չը վատացնելու համար։ Մի օր ու գիշերվայ ընթացքում օֆիցերներին, ուր որ կարելի էր, գերի էին վերցնում և տանում «Օչակով», այն հաշւով, որ եթէ այդ նաւի վրա շատ օֆիցերներ լինեն, նրան չեն ռմբակոծի. Շմիդտը յայտնեց այդ օֆիցերներին, որ զօրքերի իւրաքանչիւր գործողութեան համար պիտի կախէ օֆիցերներին։ Ժամի $3^1/_2$-ին դաշտային թնդանօթներից կրակ բացվեց Հարաւային ծովախորշում գտնվող նաւերի դէմ, որոնք ունէին կարմիր դրօշակներ. այդ դրօշակները իսկոյն ցած թողնվեցին։ Ի պատասխան թնդանօթաձգութեան Շմիդտ բարձրացրեց ազդանշան—«շատ գերի օֆիցերներ ունեմ»։ Երբ ջրասույզ արվեց ապստամբներով լի մի մակոյկ, «Օչակովը» սկսեց կրակ բաց անել, որին անմիջապէս պատասխանեցին Հիւսիսային կողմի բատարէաները և նաւերից մի քանիսը։ «Սվիրէպի» ականանաւը յարձակում գործեց, բայց «Կապիտան Սակէն», «Պամիատ Մերկուրիա» կրէյսէրներից և «Րոստիսլավ» զրահակրի սաստիկ թնդանօթաձգութեամբ առաջ նա շարքից դուրս եկաւ, ապա և 2 թեւակիր ականանաւերը, որոնցից մէկը ջրասոյզ եղաւ։ «Օչակովը» հազիւ կարողացաւ վեց անգամ թնդանօթ արձակել, բարձրացրեց սպիտակ դրօշ. էսկադրան դադարեցրեց կրակը, «Օչակովի» վրա հրդեհ սկսվեց։ Ուղարկվեցին մակոյկներ վիրաւորվածներին ափ հանելու և մարդկանց ազատելու համար։ Շմիդտը, նաւաստու շորեր հագած, փախաւ և ձերբակալվեց։ Վիրաւորվածների թիւը առ այժմ չէ որոշված։ «Օչակովը» շարունակում է այրվել։ Հրդեհը հանգցնել չէ կարելի»։

Այս պաշտօնական հեռագրին աւելացնում ենք և մի քանի լրագրական տեղեկութիւններ։ «Օչակովին» ափից ազդանշաններով առաջարկվեց անձնատուր լինել, նա սկսեց թնդանօթաձգութիւն։ Այն ժամանակ հրաման տրվեց հիւսիսային կողմի բատարէաներին կրակ բաց անել նաւի դէմ, բայց այդ բատարէաները անցան ապստամբների կողմը և նրանց հետ միասին սկսեցին ռմբակոծել քաղաքը։ Քաղաքի կէսը քանդված է։ Հիւսիսային բատարէաները լռեցնելու համար Բրեստեան գունդը յարձակվեց նրանց վրա և սուիններով գրաւեց նրանց։ Լէյտենանտ Շմիդտի ստացած մահացու վէրքը վճռեց ապստամբների վիճակը. տեսնելով իրանց հրամանատարի կորուստը, նրանք անձնատուր եղան երեկոյեան ժամի 5-ի մօտ։ Անձնատուր են եղել ընդամենը մօտ 2000 ապստամբներ։ Պատերազմը ծովային և ցամաքային զինուորների մէջ արիւնահեղ էր։ Բրեստեան գունդը յարձակվեց ծովային զօրանոցներում ամրացած նաւաստիների վրա, որոնք վերջը անձնատուր եղան։ Սևաստօպօլում հաւաքված են 21 հազար ցամաքային զինուորներ թնդանօթներով։ Կարգը հաստատվեց քաղաքում նոյեմբերի 18-ին։ Սպանվածների և վիրաւորների թիւը հասնում են 300։

«Русское Слово» լրագրի թղթակիցը Օդեսայից հաղորդում է, որ Սևաստօպօլի ապստամբները այսպիսի ծրագիր ունէին. Էսկադրայի մի մասը վճռել էր դուրս գալ բաց ծովը յեղափոխական գործողութիւնները շարունակելու համար։ Ենթադրվում էր գնալ Օդեսա և այնտեղ առաջարկել քաղաքական պահանջներ, որ եթէ չընդունվէին, պիտի ռմբակոծէին քաղաքները։ Նաւատօրմի կողմը պիտի անցնէին Օդեսայի զօրքերը։ Եւ ահա նաւահանգստից դուրս գալու միջոցին էլ սկսվեց օրհասական պատերազմը։

Վերջացաւ յեղափոխութիւնը Սևաստօպօլում։ Ծովապետ Չուխնինը նոյեմբերի 17-ից հեռագրում է. «Պատերազմական փոթորիկը հանդարտվեց, իսկ յեղափոխականը—ոչ։ Ռուս մարդկանց չէ երևում, որ իրանց տանում են դէպի ազգամիջեան պատերազմ և ինքնաոչնչացում։ Այս բոլորը հասկանում են, բայց չը կայ ոգու մեծութիւն՝ դիմադրելու համար յեղափոխական տերրորին»։

Այս սպառնալից դրութիւնն է, երևի, որ բորսաներում սարսափ առաջացրեց։ Պետական ռենտան ընկաւ մինչև 79, մի բան, որ չէ եղել նոյն իսկ ճապօնական պատերազմի մէջ կրած ամենամեծ պարտութիւնների ժամանակ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Պետերբուրգից ստացվել են հայոց եկեղեցական և դպրոցական կալքերն յանձնելու բոլոր հարկաւոր թղթերը։ Կառավարութեան կողմից՝ յանձնող մասնաժողովի նախագահ է նշանակված պետական մինիստրութեան Թիֆլիսի ներկայացուցչի օգնական Շիմանովսկին։ Երէկ երեկոյ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնն ևս իր կողմից ընտրեց 4 հոգի, որոնք դպրոցի տեսչի հետ միասին պէտք է ընդունեն դպրոցի կալքերն ու գումարները։

—

Մեզ խնդրում են հաղորդել, որ երկուշաբթի, դեկտեմբերի 5-ին, Ներսիսեան դպրոցում վերսկսվում է ուսումը, որ քաղաքում վերջին օրերս տեղի ունեցած դէպքերի առիթով ժամանակաւորապէս ընդհատված էր։

—

Թիֆլիսից Բօրչալուի գաւառն է դուրս եկել մի խաղաղարար յանձնաժողով իշխան Ի. Ս. Ճաւճաւաձէի նախագահութեամբ։ Յանձնաժողովին ընտրել է վրաց ազնուականութիւնը։ Նրա հետ միասին մեկնել են 4 հոգի ազդեցիկ թուրքեր։—Տեսնենք թէ այդ յանձնաժողովը որ և է հնար գտնէ իսկական խաղաղութիւն մտցնելու։

—

Թիֆլիսում գտնվող գերմանական, պարսկական, թիւրքական և ֆրանսիական հիւպատոսարանները ցերեկ-գիշեր պահպանվում են զօրքերով սկսած այն օրից, երբ հայ թուրքական ընդհարումներ տեղի ունեցան։ Ծիծաղելի է այդ բանը. բայց VI քաղաքամասից ոչ մի տեղ ոչ մի քրիստոնեայ չէ փախչում, նոյն իսկ մահմեդականների տները, խանութներն ու անձը մնում են անվտանգ (բացի սրիկայական տարրերի արած քայլերից) և յանկարծ հիւպատոսարանները պահպանվում են զօրքերով...

—

«Кав.» լրագրի ասելով, Թիֆլիսի պօստ-հեռագրատան պաշտօնեաներից մի քանիսը դիմել են վարչութեան և յայտնել, որ իրանք ամենևին մտադիր չեն եղել գործադուլ անելու, բայց ստիպված են եղել դադարել գործելուց, որովհետև ընկերներն սպառնացել են։ Այդ պատճառով այժմ նրանք խնդրում են, որ իրանց նորից պաշտօնի ընդունեն, երբ աշխատանքները վերսկսվեն։—Աւելորդ չենք համարում ասել, որ արդէն հրաման է ստացվել պաշտօնից արձակել բոլոր գործադուլարներին և արդէն արքունական բնակարաններից դուրս են քշում բոլորին։

—

Պրօվօկացիան գործում է անդադար, գործում է հրէշաւոր անխղճութեամբ։ Մի քանի «վրացիներ» Գօրի են գնացել և լուր տարածել, իբր թէ Թիֆլիսում հայերն սկսել են կոտորել վրացիներին... Աւելորդ է մեր կողմից հերքել այս լրբենի սուտը, որի միակ նպատակն է վրացիներին էլ գրգռել մեզ դէմ կամ գուցէ նոյն իսկ Վրաստանում հայերի կոտորած առաջացնել։ Մենք կոչ ենք անում մեր վրացի պաշտօնակիցներին՝ կտրուկ կերպով հերքել այս պրօվօկատօրական սուտը և հանգստացնել վրացիներին։

—

Դուրնօվօ առաջարկել է Պետերբուրգի պօստ-դիրեկտօրին անյապաղ պօլիցիայի օգնութեամբ դուրս հանել արքունական բնակարաններից գործադուլ անող պաշտօնեաներին և պօչտալիօններին։

—

„Русская Газета"-ն, հրաշխաւորելով լուրի ճշտութիւնը, հաղորդում է, որ խոշոր աստիճանաւորներից մէկը, որը ընդունել է պատգամաւորութիւն պօստ-հեռագրական վարչութեան պաշտօնեաների կողմից, այն միտքը յայտնեց, որ կառավարութիւնը իսկոյն չէ կարող մեծացնել պաշտօնեաների ռոճիկը, որովհետև նա յոյս չունի ստանալ հարկերը։

—

«Нов. Вр.» լրագիրը լսել է, որ արդարադատութեան մինիստր Մանուխինը հրաժարվում է և նրա տեղը նշանակվում է մեզ լաւ ծանօթ սէնատոր Կուզմինսկին։

Մոսկվայի գեն.-նահանգապետ գեն. Դուրնօվօն արձակվում է իր պաշտօնից, ստանալով գեն.-ադիւտանտի տիտղոսը։ (Р. Сл.)

—

Նուխւում «Возр.» լրագրի ասելով, Սարգիս անունով մի հայ բերել է տուել երկու զինված մարդ և քանդել է տուել իր հակառակորդ թուրքի աղիքի գործարանը։ Եւ երբ թէ այդտեղի վրացիները հաւաքվել և պահանջել են «հայ Սարգիսից» վերականգնել թուրքի գործարանը և կողոպուտը վերադարձնել, եթէ ոչ ստիպված կը լինեն դիմել ճնշիչ միջոցների։ Մենք «իբր թէ» ասում ենք, որովհետև «Возр.» լրագիրը բացարձակ կողմնապահ և ստախօս թերթ է. նա օրգան է վրաց զզուելի շովինիստական տարրերի, որոնք դեռ Բագուի ու Նախիջևանի հոսեցրած թարմ արեան օրերին դաշն կապեցին թուրք բէգերի հետ և միասին ճաշ արին... «Նախկին ցէնզուրի» պ. Փօտոյի օրգանի դիմակը պատռվեց։ Հայակերութիւնը նա մինչ այն տեղ է հասցնում, որ սուտ է խօսում։ Ահա փաստը, եթէ Նուխուի «հայ-Սարգիսի» դէպքը բաւական չէ։ «Նոյեմբերի 29-ի $4^1/_2$ ժամին հրդեհ սկսվեց մէյդանում։ Այրվեցին տներ և խանութներ։ Ընդամենը այրվել են 13 հայ տներ, որոնց մէջ բազմաթիւ թուրքերի խանութներ կան, 1 թուրքի տուն և [illegible] եկեղեցին։» Հայերի այրված տներում հազիւ 1 կամ 2 թուրքի խանութ լինի, այն էլ 20—30 րուբլու իրերով։ Ահա թէ հայատեացութեան կիրքը ուր է տանում նախկին-ցէնզորի օրգանին։

—

Կովկասի Փոխարքան թոյլատրել է երդուեալ հաւատարմատար Արշակ Առաքելեանին հրատարակել Բագու քաղաքում ռուսերէն, իր խմբագրութեամբ, շաբաթական, գեղարուեստական—երգիծաբանական թերթ կարիկատուրաներով, «Մոծակ» (Комаръ) անունով: Բաժանորդագինը տարեկան 8 րուբլի է, ճանապարհածախսով 9 րուբլի:

—

«Донская Рѣчь» լրագրի 267 և 269 համարներում տպված է Իւրի Վեսելովսկու մի յօդուածը Աւետիս Ահարոնեանի գրական գործունէութեան մասին: Հեղինակը այն միտքն է յայտնում, որ Ահարոնեանի երկասիրութիւնները աչքի են ընկնում միշտ իրանց ճշմարտասիրութեամբ, մարդասէր զգացմամբ, գեղարուեստական ըէալիզմով, և տեղ տեղ—վառ գունաւորութեամբ:

—

Հայ և Թուրք ներկայացուցիչների խորհրդակցութեան ժամանակ Դումայում, դեկտեմբերի 2-ին, Թուրքերը յայտնեցին, որ Միքայէլեան հիւանդանոցը տարված վիրաւորված Թուրքերից 25 հոգի մեռել են և նրանց դիակները 7 օրից ի վեր մնացել են անթաղ: Որոշվեց միջոցներ ձեռք առնել, որ այդ դիակները դեկտեմբերի 2-ին գիշերը տանվեն Թուրքաց գերեզմանատունը: Երէկ կայացաւ այդ սպանվածների թաղումը:

—

Հինգշաբթի, դեկտեմբերի 1-ին, Թիֆլիսի 2-դ արական գիմնազիայի դահլիճում կայացաւ «Կովկասեան մանկավարժների դաշնակցութեան» անդամների ընդհանուր ժողովը: Նախկին ժողովի արձանագրութիւնը կարդալուց յետոյ, ժողովը այդ օրը զբաղվեց «Դաշնակցութեան» նախագծի 21-դ յօդուածի քննութեամբ, որը վերաբերում է «Դաշնակցութեան գործունէութեան»: Այդ յօդուածի բովանդակութիւնը հետևեալն է՝. «Ժողովրդական կրթութեան վերաբերեալ խնդիրների հաւաքական կարգով (կօլլեկտիվ) մշակումը «դաշնակցութեան» նպատակին վերաբերեալ 1 և 2-դ յօդուածներում յիշատակված սկզբունքներով, որոնց գործնական իրականացումը ապահովէր՝ ա) հեռացնել ուսումնարան մտնելու այն բոլոր արգելքները, որոնք վերաբերում են մտնողների սեռին, ծագման, դաւանութեան և նիւթական կարողութեան. բ) թէ մասնաւոր անձինք և թէ հասարակական հիմնարկութիւններ բացելու իրաւունք ունենան ամեն տեսակ դպրոցներ և նրանց կազմակերպելու, նոյն իրաւունքն ունենան և ուսումնարանից դուրս կրթութեան գործում. գ) պետական միջնակարգ և ստորակարգ ուսումնարանների վերակազմութիւնը ինքնավարական սկզբունքներով. դ) տարրական ուսումնարաններում մտցնել ձրի, պարտադիր և ընդհանուր ուսուցումն այնպիսի հիմունքներով, որ այդ ուսումնարանի աւարտողները անարգել կարողանան մտնել աւելի բարձր ուսումնարաններ՝ ե) թէ պետական և թէ հասարակական ուսումնարաններում կրօնական տարրը դպրոցի համար անբաժան և պարտադիր չը համարել. զ) ժողովրդական դպրոցների տեսուչների և վերատեսուչների իրաւունքների շրջանի փոփոխութիւնը. է) հասարակական հիմնարկութիւնների կողմից բացած ուսումնարանների կառավարութեան գործում՝ հրաւիրել մասնակցելու ուսուցչական կազմակերպութեան (կորպորացիա) անդամներին: Այդ ժողովի քննութեան և լուսաբանութեան նիւթը դարձաւ այդ յօդուածը և նրա էական կէտերը: Շնորհիւ բիւրոյի գլխաւոր գործող անդամ պ. Զաչինեանի տաղանդաւոր և լայն մեկնաբանութիւններին՝ յիշեալ յօդուածին վերաբերեալ հարցերի—ժողովականները, որոնք՝ շնորհիւ մի ինչ որ անշնորհ և անփորձ նախագահի բացատրութիւնների և վարման՝ միանգամայն սառել են վերջին անգամները յաճախելուց և հազիւ $^1/_4$ մասն է նախկին այցելուներից յաճախում—փոքր ինչ փոփոխութեամբ ընդունեցին յիշեալ յօդուածը և դրանով էլ վերջացաւ ժողովի նիստը:

—

Բաթումի պատգամաւորութիւնը խնդրել էր հեռացնել քաղաքից կօզակներին: Գեներալ Մալաման բաւարարութիւն է տուել այդ խնդրքին:

—

Շատ քաղաքացիներ դիմում են Թիֆլիսի Դումային զէնք ստանալու համար: Քաղաքային վարչութիւնը արձանագրում է բոլոր դիմողներին: Շատերը առաջարկում են զէնք գնել իրանց հաշուին:

—

Թիֆլիսի քաղաքական կազմակերպութիւնները այժմեան ժամանակ զբաղված են գիւղերում թշնամի ազգութիւնների մէջ խաղաղութիւն հաստատելու գործով: Առաջնակարգ միջոցների մէջ ընդունված է ագիտացիան գիւղական մասսաների մէջ:

—

Դեկտեմբերի 2-ին 6-րորդ քաղաքամասում, Շիօեվի տանը գտնվել է մի դիակ, որ յանձնվել է սանիտարական խմբի ուսանողներին: Սպանվածը ըստ երևոյթին վրացի է կամ հայ:

—

Վերջին երկու օրը հրդեհաշէջների խմբի մի մասը մշտապէս գտնվում է Մէյդանում, որովհետև ժամանակ առ ժամանակ հրդեհներ են ծագում և առաջուց հրդեհված շինութիւնները դեռ շարունակում են ծխալ: Հրդեհը բռնել էր հետևեալ տարածութիւնը քառակուսի ձևով—Մէյդան, Վօրօնցովսկայա փողոց, Կրասիլնայեա փողոց և Կրէպօստնօյ փողոց: Այդ քառակուսիի մէջ գտնվող յունական եկեղեցին կարելի եղաւ ազատել, բայց նրա շուրջը գտնվող բոլոր շինութիւնները ոչնչացել են: Վնասվել է միայն եկեղեցու սեղանի մի մասը: Այրվել են Գ. Ա. Խարազեանի, Գուրգէնբէկեանների, Խարազեանների, Յարութիւնեանների, Քէփինեանների, Զախարբէգեանների, Տէր-Յակոբեանի, Աբամէլիքի, Թուլաեվի, Թէմուրազեանների տներն ու շինութիւնները: Բոլոր այն տները, որոնք նայում են Մէյդանին և Վօրօնցովեան փողոցին, այրվել են, բացի Գէորգեանի տնից, ուր մազաղինում հրդեհաշէջները ազատել են մի կասսա շատ թանգագին թղթերով և մանր փողով: Կասսան հրդեհաշէջները յանձնել են այդտեղ կանգնած զօրքերի օֆիցերներին և արդէն տուած է տիրոջը: Կրէպօստնօյ փողոցում այրվել են Ոսկանովի և Թօփչիբաշեվի տները. Կրասիլնի փողոցում աջողվեց ազատել Մնացականեանի և Աբաշովի տները: Այդ տներից մէկում դեկտեմբերի մէկին ձերբակալված է կրակողը՝ կերօսինի ամանը ձեռքում: Մի քանի տներում, ուր կարողացան ներս մտնել հրդեհաշէջները, գտել են այրեցիկ նիւթեր, որոնք դարսված էին հրդեհ առաջացնելու համար: Շատ տներում աջողվում էր հանգցնել կրակը, բայց մի քանի րոպէից յետոյ դարձեալ վառվում էր:—Ոչ մի գործարան չէ մնասվել: Վօրօնցօվսկայեա փողոցի վերջում այրվեց Եղիազարեանի կալուածը:

—

Պօստ-հեռագրատան պաշտօնեաների Թիֆլիսի շրջանական բիւրօն—Մօսկվա խորհրդակցութեան ուղարկած իրանց պատգամաւորից ստացել է հետևեալ հեռագիրը. «Պինդ ենք կանգնած. կը կռւենք մինչև որ լիակատար բաւարարութիւն ստանանք: Յոյս ունենք յաղթել, դաւաճանողների դէմ դաշնակցութիւնը խիստ միջոցներ է ձեռք առել»:

—

Թիֆլիսի առևտրական դպրոցի սաների և դասատուներից մի քանիսի մէջ լուրջ ընդհարումներ են տեղի ունեցել: Աշակերտները պահանջում են մի քանի ուսուցիչների արձակում. հակառակ դէպքում սպառնում են գործադուլ անել:

—

Թիֆլիսի «հայրենասէրների» կուսակցութիւնն իր վերջին ժողովներում որոշում է կայացրել միանալու վերջերս օֆիցէրների կայացրած վճռին: Կուսակցութիւնը տալիս է իր լիակատար վստահութեան քուէն թէ զօրքին և թէ ոստիկանութեանը՝ իբր իրանց կոչման բարձրութեան վրա կանգնած հիմնարկութիւնների ու մարմինների: — Դա ճաշակի խնդիր է: «Պատրիօտների» կողմից այդ որոշումն աւելորդ էր. ամեն մարդ գիտէ նրանց տեսակէտը:

—

Սօցիալ-դէմօկրատ-բանւորական թաղական միտինգներից մէկում նոյեմբերի 30-ին, հռետորներից մէկը դարձրեց ժողովականների ուշադրութիւնը քաղաքումս տիրող թանգութեան վրա, որը աւելի ևս զգալի դարձաւ Թուրք-հայկական ընդհարման օրերից: Այսպէս օր. ոչխարի միսը 11 կոպէկից բարձրացել է 15 կ. ֆունտը, տաւարինը 12 կ., նաւթը 4 կոպ. դարձել է 7—10 կոպ., հացը 3$^1/_2$ կոպ. դարձել է 4$^1/_2$—5 կ. ֆ., մանաւանդ շաքարի գինը զգալի կերպով բարձրացել է մանրավաճառների մօտ 30 կ. է ծախվում ֆունտը: Յիշատակելով յիշեալ անհրաժեշտ պիտոյքների թանգութիւնը, հռետորը յայտնեց, որ կօմիտէտը այդ մասին խորհրդակցել է եւ վճռել է դիմել բոլոր մթերքներ վաճառողներին, որ նրանք ի չարը գործ չդնեն իրանց առևտուրը և գները յարմարեցնեն բարեխիղճ կերպով ժամանակի բերմունքի հետ: Սպառողներն էլ պարտաւոր են զեկուցումներ անող առևտրականների անունները յայտնել բիւրօին: Այս առթիվ պարտք ենք համարում յայտնել, որ սօցիալ-դէմօկրատ-բանւորական դասակարգի բոլոր կարգադրութիւնները (գործադուլ և այլն) զարմանալի համերաշխութեամբ կատարել են ամենաներս կերպով բազմաթիւ առևտրական եւ արհեստաւոր եւ այլ դասակարգեր, ուստի թող կօմիտէն մթերքների գները որոշելով յայտարարէ ի գիտութիւն սպառողների՝ պարտաւորելով ծախողներին անշեղ վաճառել մթերքները կօմիտէից նշանակված սակագնով: Չնօր մինչև հիմա ամեն հարցի մէջ ժողովուրդը համերաշխ է գտնվել սօցիալ-դէմօկրատ-բանւորական կազմակերպութեան ազնիւ ձգտումներին. տարակոյս չկայ որ և այս հարցում նրանք բացառութիւն չեն կազմելու, իսկ դրանով խեղճ և կարօտ դասակարգի դրութիւնը փոքր ինչ կը թեթևանայ, որը ներկայումս բարոյական և հոգեկան տիրող տանջանքների հետ՝ ստիպված է թանգութեան ծանրութիւնը ևս տանել:

—

Մեզ խնդրում են տպագրել հետևեալ արդարացի հերքումը. «Раб. Л.» լրագրում տպված է մի լուր, որ իբր թէ Գէօրգիևսկի հրապարակի անկիւնում գտնվող Բահիմ Ալիևի պահեստը կողոպտված է և որ այդ պահեստը խնամքով պահպանում էին Դաշնակցականները և սօցիալ դէմօկրատիական դրուժինները մի շաբաթ շարունակ: Իբր թէ այդ պահեստում կայ 500 պուդ պանիր, մեղր և այլ իրեր: Մի քանի անգամ կողոպտիչները փորձել են կողոպտել այդ պահեստը, բայց բռնվել և պատժվել են: «Սակայն, ասում է բանւորական լրագիրը, կողոպտիչ—խուլիգանները յարմար րօպէ գտան և կողոպտեցին: Թալանին մասնակցում էին «Դաշնակցութեան նշաններ կրող անձեր, ակներև է որ զինւորներ էին դրանք»:—Այդ լուրի մէջ կայ և խոշոր թիւրիմացութիւն, և՛ մի անպիտան չարամտութիւն: Այդ պահեստի դիմացը կենող պ. Հայկ Մատթէոսեանը տեսել է թալանողներին: Ինչպէս որ «Р. Л.»-ի լրատուի [illegible] ազգութիւն չէ ճանաչում, այնպէս էլ խուլիգանութիւնն ազգութիւն և հայրենիք չունի: Խանութը թալանել են մօտակայքում բուն դրած հայ և վրացի խուլիգանները, մի քանի համալներ և ուրիշ սրիկաներ: «Դաշնակցութեան» նշան կրող և այն էլ «զինւորներ» ամենևին չեն եղել. դա զրպարտութիւն է, անբարեխիղճ և վատ տեսակի զրպարտութիւն: Եթէ լրատուն այդ «զինւորներից» երբ և է պատիւ է ստացել, չէ կարելի թոյլ տալ այդ անձնական կեղտոտ հաշիւը մտցնել լրագրական ասպարէզ... Պարզ է, լրատուն աշխատում է ստուեր գցել «Դաշնակցութեան» վրա: Բայց այնքան չէ մտածում, որ մի երկու խուլիգան կարող էին գտնել փալաներ և կպցնել կուրծքերին... Իսկ պ. լրատուն ամենայն անպարկեշտութեամբ խուլիգանների գործին անպատճառ ուզում է մասնակից անել տալ և Դաշնակցականներին»:—Աւելորդ չենք համարում յայտնել, որ այս հերքումը բերել է վերևում յիշված պ. Հայկ Մատթէոսեանը, միանգամայն կազմակերպութիւններից հեռու մի ականատես վկայ:

—

Մեր ձեռքն է հասել մի նոր տեսակի հրէշաւոր կոչ, ուղղված զօրքին: «Եղբայր զինւորիկներ: Նոյեմբերի 25-ին Փոխարքան զէնք տուեց տեղացիներին, սեղմեց նրանց ձեռքը և ասաց. «Յանձնում եմ ձեզ քաղաքը և նրա բնակիչներին»: Եղբայր զինւորներ, այդ խօսքերից երևում է, որ նա վստահութիւն չունի զօրքի և ռուս ազգաբնակութեան վրա, իսկ դա զօրքի և ռուս ազգաբնակութեան համար մահացու վիրաւորանք է: Եթէ նա աւելի է վստահանում տեղացիներին, ուրեմն ինչու է հրամայում իրան պաշտպանել զինւորներով ու կօզակներով: Թող ուրեմն եղբայրներ՝ զինւորներ ու կազակներ, այդ չը պէտք է անէք, որովհետև նա Ցարի և Ռուսաստանի դաւաճանն է, որ խնամում է տեղացիներին, որովհետև նրա կինը հայուհի է, ուրեմն և այդ կինն է մեզ կառավարում: Նրա որդին էլ պսակված է հայուհու հետ, այդ պատճառով էլ նա հայերի կողմն է բռնում, իսկ ռուս ազգաբնակութիւնը ծաղրի է մատնում և աչքի առաջ չէ ունենում ռուս ազգաբնակութեան շահը: Գործադուլի ժամանակ, երբ աղքատ ռուս բանւորը սոված էր, նեղութիւն կրեց նա արդեօք իմանալու, թէ ինչով է ապրում այդ խեղճ ժողովուրդը. Ինչ արեց նա նրա համար: Բոլորովին ոչինչ: Նա աշխատում է խնամել տեղացիներին: Զինւոր եղբայրներ, մի հաւատաք դրանց, նրանք բոլորը «կրամօլնիկներ» են ռուս գիւղացիների վերաբերմամբ: Նրանք, քննելով Ռուսաստանի գործերը, մոռացան հարցնել երկրի տէրերին—գիւղացիներին, թէ արդեօք նրանք ցանկանում են այդ փոփոխութիւնը թէ ոչ: Թանգագին եղբայրներ, կանգնեցէք Ռուսաստանի համար, ասացէք ուղղակի «կրամօլնիկներին» երեսին, որ նրանք ծախեցին Ռուսաստանը. մինչև անգամ տեղացիները ծաղրում են մեզ և ասում, որ ռուսները ծախեցին Ռուսաստանը. մի՞թէ այդ կարելի է տանել: Կանգնենք ուրեմն եղբայրներ, Ռուսաստանի ամբողջութեան համար»:—Արդեօք ովքեր են այս անհեթեթութիւնը շարադրել...

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—

Արդեօք հասել է վերջապէս, ժամանակը, երբ Թիւրքիան կործանող, արիւնախում համիդական րէժիմը պէտք է քարուքանդ անվի, եւրօպական պետութիւնները պէտք է օգնեն Թիւրքիայի թշուառ ժողովուրդներին ազատվել սոսկալի լծից, որի տակ նրանք տանջվում, հեծում են մօտ 30 տարի:

Հեռագրական հաղորդակցութիւնները ընդհատված լինելով, գործադուլի պատճառով, մենք չունենք ստոյգ տեղեկութիւններ, բայց այնու ամենայնիւ կան բաւական տեղեկութիւններ՝ պաշտօնական և կիսապաշտօնական ու մասնաւոր աղբիւրներից, որոնք ցոյց են տալիս, թէ ներկայումս Թիւրքիայում տեղի է ունենում մի արտասովոր դէպք, որ պէտք է կերպարանափոխէ արևելեան ամբողջ հարցի ներկայ վիճակը:

Նախ քան ստոյգ տեղեկութիւններ, թէ սուլթանի կառավարութիւնը աւարտել է 3 թիւրքական կօրպուսների մօբիլիզացիան Փոքր-Ասիայում և այժմ չորրորդ կօրպուսն են զէնքի կոչում: Այդ զօրքերը ուղարկվել են դէպի մեր սահմանները, Կարսի շրջանի մօտ: Ուրեմն, Թիւրքիան կամ երկիւղ է կրում Ռուսաստանից, կամ ինքն կամենում է յարձակողական, ագրէսիվ քաղաքականութեան դիմել Ռուսաստանի վերաբերմամբ:

Եթէ լաւ մտածելու լինենք և կշռելու վերջին դէպքերը, այդ ենթադրութիւնը շատ էլ անհաւանական չը պէտք է թուի: Թիւրքիան վաղուց տածում է ոխերիմ թշնամական զգացումներ դէպի Ռուսաստանը, որ եղել է նրա աւանդական և պատմական թշնամին, որ հասցրել է ամենամեծ հարուածները նրա գոյութեան հզօրութեան և ամրութեան: Հանգամանքներից ստիպված, նա առերես բարեկամութիւն է ցոյց տուել, օգտվել նրանից, երբ շնորհիւ Լօբանովի ծրագրած կարճատես քաղաքականութեան, Ռուսաստանը յետ կացաւ իր պատմական միսիայից և թոյլ տուեց, նպաստեց նոյն իսկ հայերի ջնջման Թիւրքիայում ու ձգեց նրան Գերմանիայի գիրկը: Ռուսաստանը այժմ սկսել է հասկանալ իր գործած խոշոր և աններելի սխալը. նա սկսել է յիշել, որ Թիւրքիայի հետ իր բոլոր հաշիւները դեռ չեն յայտարարված, կարգի բերված. վերջապէս, մակեդօնական հարցում սուլթանի ցոյց տուած յամառութիւնը հանել է համբերութիւնից մեծ պետութիւններին և դրանց թւում Ռուսաստանին, որ վերջերս մի շարք դիմումներ արեց Բ. Դռան, պահանջելով նոյն իսկ քանդել Բօսֆօրի ափերին կառուցված ամրութիւնները:

Այդ երկու օրը նոյն իսկ լուր տարածվեց, որ իբր թէ մեծ պետութիւնների միացեալ էսկադրան, որ կանգնած էր Միտիլէնի առաջ, Թիւրքիայի դէմ ծովային ցոյց անելու համար, այժմ մտել է Բօսֆօր և ռմբակոծում է Կ. Պօլիսը, ուր տեղի է ունեցել իբր թէ քրիստոնեաների կոտորածը: Ամենայն վերապահութեամբ հաղորդում ենք այս լուրը, որը սակայն ցոյց է տալիս, թէ առհասարակ յուզված տրամադրութիւն է ստեղծվել Թիւրքիայի գործերի վերաբերմամբ:

Ահա այժմ, ինչ որ ստոյգ է, հետևեալ տեղեկութիւնն է, որ մենք գտանք մայրաքաղաքից ստացված թերթերի մէջ, նոյեմբերի 15-ից:

«Բեռլինի Տագեբլատտ» թերթի Կ. Պօլսի թղթակիցը հաղորդում է, թէ եւրօպական էսկադրաների ցոյցը Թիւրքիայի դէմ սկսվեց նոյեմբերի 12/25-ին առանց նախապէս որ և է հաղորդագրութեան կամ ուլտիմատումների: Այդ օր առաւօտեան գրաւվեց Միտիլէնը, իսկ յետոյ Թէնեդոսը. շուտով պէտք է սկսվի Դարդանելի պաշարումը: Դեսպանները Կ. Պօլսում երկիւղ են յայտնում, որ նոր բարդութիւններ կարող են ծագել: Այն լուրը թէ սուլթանը մերժել է կատարել մեծ պետութիւնների պահանջները, հակառակ սովորութեան, խիստ տարածվեց մահմեդական ժողովրդի մէջ: Մուսուլման մզկիթներում քարոզիչները կոչ էին անում հաւատացեալներին, գրգռելով նրանց օտարազգիների դէմ»:

Այս տեղեկութիւնը արդէն շատ բան է պարզում: Հաւանական է, որ մեծ պետութիւնների միացեալ էսկադրան պաշարել է Դարդանելը և այդ պատճառով, գուցէ Կ. Պօլսում, շնորհիւ քարոզիչների գրգռման տեղի է ունեցել քրիստոնեաների կոտորած, որը կը ստիպէր անշուշտ միացեալ էսկադրային ռմբակոծել Կ. Պօլիսը:

Հ. Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Բեռլին: «Ֆօս. Ցէյտունգ» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը հաղորդում է մի յուզիչ լուր, իբր թէ սուլթանը այս րոպէիս գործ է դնում բոլոր ջանքերը, որ համոզէ անգլիական և ճապօնական կառավարութիւնները մտցնել իրանց դաշնագրի մէջ մի գաղտնի կէտ, որով երկու պետութիւնները պարտաւորվում են հարկաւոր դէպքում պաշտպանել statu quo-ն Փոքր-Ասիայում և Թիւրքական Արաբիայում:

Հէնց որ Բ. Դուռը պաշտօնապէս տեղեկանայ, որ այդպիսի յօդուած մտցնվել է անգլօ-ճապօնական դաշնագրի մէջ, ասում է լրագիրը, սուլթանը անհրաժեշտաբար իր կողմից գրաւոր պարտաւորութիւն կը տայ «ցոյց տալ այդ երկու պետութիւններին, երբ նրանք կը պահանջեն, բացառիկ ծառայութիւններ»: Դրանով ի հարկէ, հասկացվում է Դարդանելի և Բօսֆօրի բացումը Ճապօնիայի և Անգլիայի համար, երբ նրանք պատերազմ մղելու լինեն Ռուսաստանի դէմ: Մինչև այժմ բանակցութիւնները վարվում էին միայն Ճապօնիայի հետ և թղթակիցը հաւաստացնում է, որ նրանք աջող են ընթանում: Ինչպէս յայտնի է, ճապօնական դիպլօմատ բարօն Սուէմացուն Լօնդօնից գնալիս մտաւ Կ. Պօլիս: Այդ ժամանակ էլ իբր թէ յարուցվեց այդ հարցը: Հանելուկ է թւում միայն այն, թէ ճապօնացիները ինչպէս կարող են երաշխաւորել սուլթանին Փոքր-Ասիայի տիրապետութեան անձեռնմխելիութիւնը և ինչպէս կարող է սուլթանը, առանց խախտելու միջազգային բոլոր պարտաւորութիւնները, բանալ առանձին պետութիւնների համար Դարդանելը: Այդ հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ Թիւրքիան պատերազմ հրատարակէ Ռուսաստանին:

Պարսկաստան: Սպահանից հեռագրում են նոյեմբերի 21-ին, որ Շիրազում 5 օրից ի վեր խռովութիւններ են տիրում: Գործերը և վճարումները կանգ են առել: Անկարգութիւնները սկսվեցին Ջհուդ-Բուշանով (հրէաների թաղով), մի քանի տներ աւերված են: Շատերը փախան, թողնելով իրանց գոյքը. մնացածները մեծ զրկանքներ են կրում: Զօրքը պաշտպանում է հրէական թաղը: Սարդարը անզօր է դադարեցնել անկարգութիւնները:

Թիւրքիա.—Պօստ-հեռագրական գործադուլը Ռուսաստանում, զրկեց մեզ մակեդօնական հարցի առիթով Թուրք-եւրօպական ընդհարման գործի մանրամասնութիւններից: Ինչպէս յայտնի է, արդէն ստացված հեռագիրներից, դաշնակից պետութիւնների նաւատորմը գրաւեց Միտիլէն կղզին, ստիպելու Սուլթանին, որ զիջէ մակեդօնական պահանջների առաջ: Գուցէ աւելորդ չէր լինի պարզել մեր այն ընթերցողներին, որոնք մօտից չեն հետևել մակեդօնական հարցի պատմութեան, ներկայ ընդհարման ծնունդն ու պատճառները:

1902 և 1903 թւերին Մակեդօնիան և մասնաւորապէս Կոսսովայի, Մօնաստիրի և Սալօնիկի վիլայէթները կրակի և արեան մատնվեցին: Այդ շարժումը առաջ էր գալիս երկու պատճառներից. առաջին՝ զայրոյթը մի ժողովրդի, որ արիւնաքամ էր եղել թիւրքական բարբարոս լծի տակ, յոգնել էր տարեկան երեք անգամ վճարելուց այնպիսի ճնշող տուրքեր, որոնք սահմանված էին Սուլթանի անձնական բաւականութեան և ոչ երկրի բարեշինութեան, երկրորդ՝ յեղափոխական կօմիտէների յուզմունքները, որոնք ձգտում էին Մակեդօնիայի ինքնավարութեան:

Տեղի ունեցող կոտորածները այնքան վրդովիչ բնաւորութիւն էին կրում, որ պետութիւնները, օգտվելով Բեռլինի դաշնագրով իրանց վերապահված իրաւունքներից, անհրաժեշտ դատեցին միջամտել Միւրցշտէգում Աւստրիայի և Ռուսաստանի ներկայացուցիչների միջև տեղի ունեցած մի տեսակցութեան ընթացքում, կոմս Գօլուխովսկի և կոմս Լամզդօրֆ մշակեցին մի ծրագիր յիշեալ երեք նահանգները խաղաղացնելու նպատակով: Այդ ծրագրում նշանակված էր խաղաղացման իբրև անմիջական միջոց—ստեղծել մի ոստիկանութիւն, որի օֆիցերները լինէին եւրօպական պետութիւններից: Ֆրանսիային յանձնվեց Սէրէսի շրջանը, Անգլիային՝ Դրամայի, Իտալիային՝ Մօնաստիրի, Աւստրիային՝ Իւսկիւբի և Ռուսաստանին՝ Կոսսովայի շրջանը:

Վերջին երկու պետութիւնների ձեռք բերած արդիւնքը այնքան էլ մեծ չեղաւ: Միւսները աւելի աջողութեամբ կռվեցին Սուլթանի չկամութեան դէմ, որը սակայն համբերատարապէս ընդունել էր Միւրցշտէգի ծրագրի այդ մասը:

Երկիրը մի քիչ խաղաղված լինելով, պետութիւնները մտածեցին արմատապէս ջնջել որ և է յուզման պատճառները, և այդ նպատակով ցանկացան կարգաւորել Մակեդօնիայի ֆինանսական հարցը, որից բղխում էին բոլոր խառնակութիւնները: Պետութիւնների ներկայացուցիչները՝ երկրի խաղաղացման իբրև անմիջական, ստիպողական միջոց, խնամքով ուսումնասիրել և կազմակերպել էին ոստիկանութեան գործը, բայց ֆինանսական հարցը անորոշ էին թողել:

Աբդուլ-Համիդ անմ այդ առիթից օգտվեց դժուարութիւններ յարուցանելու համար: Նա ընդունեց, որ անհրաժեշտ էր երկրում մտցնել ֆինանսական րէֆօրմներ և խոստացաւ այդ րէֆօրմների ծրագիրը մշակել, բայց յամառութեամբ մերժեց ենթարկվել կօնտրօլի, որը պետութիւնների համար միակ ապահովութիւնն էր կազմում, թէ այդ րէֆօրմները իսկապէս գործադրվում են:

Պետութիւնները պնդեցին կօնտրօլի մասին: Նրանք պահանջեցին Սուլթանից, որ ընդունէ պետութիւնների կողմից նշանակված վերահսկիչները, որոնց պարտականութիւնն էր Մակեդօնիայում հաստատել ֆինանսական մի այնպիսի սիստէմ, որի շնորհիւ տուրքերը արդար կերպով բաժանվէին և հարստահարութիւնների առիթ չը տային: Այդ պահանջը մերժվեց: Այն ժամանակ պետութիւնները ուղարկեցին Սուլթանին երկրորդ ծանուցագիր, որով յայտնում էին թէ ֆինանսական գործակալները արդէն ընտրված, նշանակված են և պէտք է որ Թուրք կառավարութիւնը ընդունէ նրանց պաշտօնը: Այս անգամ Համիդը՝ յիշեալ ծանուցագրին չը պատասխանեց նոյն իսկ, բայց միւս կողմից շարունակեց անձամբ կազմակերպել պետութիւնների պահանջած րէֆօրմները: Եւ դրա համար, տուրքերի գանձման գործը յանձնեց Բանկ օտոմանին. այդ բոլորը լաւ էր, միայն բաց էր մնում գլխաւորը—վերահսկողութիւնը, կօնտրօլը: Պետութիւնները այնքան վարժված էին Սուլթանի խաղերին, որ չէին կարող ներկայով գոհ լինել. եթէ վաղը նա աջ ձեռքով յետ խլէր այն՝ ինչ տուել էր այսօր ձախով: Ուստի պետութիւնները պնդեցին իրանց կօնտրօլեօրների հաստատութեան մասին: Վերահսկիչները արդէն հասել էին երկիր և աշխատում էին յարաբերութեան մէջ մտնել Սուլթանի ներկայացուցչի, տեսուչ Հիլմի փաշայի հետ: Ու սկսվեց մի տարօրինակ աչքակապուկի խաղ: Երբ վերահսկիչները Սալօնիկ էին գնում, Հիլմի փաշան այնտեղից ծլկում էր. այսպէս երկար շարունակվում էր փախուստի և հետապնդումի խաղը, երբ մի օր, բաղդի բերմամբ, պետութիւնների ներկայացուցիչներն ու Սուլթանի սատրապը միմեանց հանդիպեցին: Բանակցութեան [illegible] րօպէն հասել էր... երբ յանկարծ Հիլմի փաշան յայտնեց որ ինքը հրաժարվել է արդէն իր պաշտօնից:

Այս անգամ Յօբի համբերութիւնն ունեցող պետութիւնները բարկացան և յայտնեցին, որ պիտի դիմեն նաւային ցոյցի: Սուլթանը՝ իր ճիւաղային խորագիտութեամբ, ծիծաղեց սպառնալիքի վրա և բնաւ չը յուզվեց. նա շատ էր լսել այդպիսի սպառնալիքներ, շատ էր տեսել այդպիսի թղթէ ռումբեր, երբ պետութիւնները միացեալ էին:

Բայց չար բաղդը կամեցաւ, որ գոնէ այս անգամ այդ հրէշը իր հաշիւների մէջ սխալվի: Պետութիւնները միացան և գրաւեցին Միտիլէն: Սուլթանը տեղի տուեց արդէն, պիտի տայ, այդ կիմանանք ապագայում, երբ պօստ-հեռագրական գործադուլը դադարի:

Մի բան միայն պարզ է: Հնարաւոր է ենթադրել, որ պետութիւնները թքելով՝ իրանց արժանապատուութեան վրա, թրքական ջրերից հեռանան, առանց ստանալու իրանց պաշտպանած արդար դատի յաղթանակի ապահովութիւնը, առանց փրկելու այդ դժբախտ Մակեդօնեան իր դահիճի ճիրաններից:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
ՁԻԳՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և ներարդային
Զ. Ի. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆՑ—1—1$^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.
ԴՐՆ-ԲԺԻՇԿ ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1$^1/_2$-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Յ. ԴՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց 5 և ծաղկահատ.:
Խ. Ֆ. ԱԲԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—7—7$^1/_2$ ժ.
Գ. Ա. ԱՐԴԱՋԻԱՆԻ. Կատարում է միկրօ-քիմիական և բակտերիօլօգիական հետազօտութիւններ:
Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Ելիզաւետինսկայա փողոց, 101, տելեֆոն 1026.
Հիւանդներին ընդունելութիւնը ամեն օր:
Մ. Գ. [illegible] 11—12 ժ.—[illegible]
Ի. Ն. [illegible] 11—12 ժ.—[illegible]
Գ. Ն. [illegible]—12 ժ. կանանց հ. և [illegible]
Ի. Ն. [illegible] 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձ.
Գ. Հ. [illegible] 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Գ. [illegible] 1—2 ժ. [illegible]
Մ. Մ. ԷԼՋԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի
Գ. Ա. ԲԷՑԷՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում են միկրօսկօպիական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ստնտուների (кормилица) ընտրողութիւն: Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.: Օպէրացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան: Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմէրներից:
(չ. ու. կ.) 21—100

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Օպերային արտիստների ընկ.
Շաբաթ, դեկտեմբերի 3-ին կը ներկայացվի
2-րդ անգամ
ՉԵՐԵՎԻՉԿԻ
օպերա 4 գործ. 10 պատկ. երաժ. Չայկօվսկու
Մասնակցում են տ.տ. Գաչինսկայեա, Միշեցկայեա, պ.պ. Դօնսկօյի, Կարելին, Սօկօլսկի, Դրակուլի, Չիստյակօվ, Վօլսկի, Դեմիտ Նենկօ, Շէյն:
Սկիզբը երեկոյեան 8 ժամին:
Տեղերի գները սովորական են:
Անօնս. Կիրակի, դեկտեմբերի 4-ին, կը ներկայացվի
Ցերեկը «ՌՈՒՍԼԱՆ» և «ԼԻՒԴՄԻԼԼԱ»
Երեկոյեան «ԿԱՐՄԷՆ»
Երկուշաբթի, դեկտեմբերի 5-ին կը ներկայացվի
ՀԷՅՇԱ
Պատրաստում են ներկայացնելու Красное Солнышко.

Բագւում անցեալ հոկտեմբերի 20-ին խառնակութիւնների ժամանակ կորել է Բանանց գիւղի բնակիչ
ՍԱՐԳԻՍ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ՏՕՆԵԱՆՑԸ
Նրա հայր Միքայէլը գնացել է Բագու որդուն փնտռելու, բայց չէ գտել. գուցէ փախել է Բագուից, կենդանի է մնացել,—յայտնի չէ: Նրա դժբախտ հայրը աղերսում է՝ ով գիտէ նրա որդու տեղը, ուր գտնվելը, որտեղ սպանվելը (եթէ սպանված է) կամ ում ձեռքով [illegible]
3—5

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԳՐԱԿԱՆԱԳԷՏ
ցանկանում է ունենալ հայ ընտանիքներում [illegible] предъявителю квит. „Мишака" за № 1023.
2—2

ОТКРЫТА ПОДПИСКА
на еженедѣльную газету учащихся
„ЭХО"
Нашъ лозунгъ: „Свободная автономная школа, въ свободной Россіи!"

Редакція приглашаетъ учащихся всѣхъ среднихъ учебныхъ заведеній какъ мужскихъ, такъ и женскихъ принимать участіе.

Ближайшая цѣль редакціи, это сдѣлаться дѣйствительнымъ органомъ всѣхъ учащихся.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

	Съ достав.	Безъ дост.	Съ перес.
На 1 мѣсяцъ	25 к.	20 к.	30 к.
„ 2 „	50 к.	40 к.	60 к.
„ 3 „	70 к.	60 к.	90 к.
„ 4 „	90 к.	80 к.	1 р. 20 к.
„ 5 „	1 р. 10 к.	1 р. — к.	1 р. 50 к.

Подписка принимается въ конторѣ газеты, а также въ отдѣленіяхъ ред. конт. Въ I-й женской гимназіи ученицы VIII кл. Амираговой, во II-й женской гимназіи ученицы VII кл. Соболь, въ III-й женской гимназіи ученицы VII кл. Косабовой, въ III-й мужской гимназіи въ ред. газ. «Отголоски», въ IV женской гимназіи ученицы VII кл. Трофимовой, въ музыкальномъ училищѣ ученика средн. курса А. Туманова.

Редакція и контора помѣщается въ I-й мужской гимназіи, входъ съ Гимназической улицы, въ помѣщеніи читальни, открыта отъ 10 до 12 ч.

Первый № выходитъ 4-го декабря, въ количест. 1000 экз.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1906 Թ.
„ԱՇԽԱՏԱՆՔ"
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԳԻՒՂԱԿԱՆ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ
ՈՐԸ ԴՈՒՐՍ Է ԳԱԼՈՒ ԱՌԱՋԻԿԱՅ 1906 Թ. ՅՈՒՆՎԱՐԻ ՄԷԿԻՑ

Ծրագիր՝ 1) Առաջնորդող յօդուածներ քաղաքատնտեսական ժամանակակից խնդիրների մասին. 2) Գիւղական կեանք և կարիքներ. 3) Գիւղական տնտեսութիւն և տեխնիկա. 4) Զեմստվօ և համայնք. 5) Գիւղական դպրոց, դատարան և ոստիկանութիւն. 6) Գիւղական պրօլետարիայի շուրջը. 7) Առողջապահութիւն և անասնաբուժութիւն. 8) Թղթակցութիւններ գաւառից. 9) Մամուլի շուրջը. 10) Պատկերներ և զրոյցներ. 11) Հարցեր և պատասխաններ. 12) Շուկայ և տեղեկատու և 13) Յայտարարութիւններ:

«Աշխատանքը» նուիրված է լինելու հայ գիւղացիութեան և նրա միջից դուրս եկած պրօլետարիատի շահերին և կարիքներին:

Գաւառի և գիւղի հետ սերտ և կենդանի յարաբերութիւններ հաստատելը «Աշխատանքի» ձգտումն է:

Ուսուցիչները, գիւղական քահանաները և գիւղական ինտելիգենցիան «Աշխատանքի» թղթակիցներն ու կենդանի ույժերն են լինելու:

«Աշխատանքին» աշխատելու հրաւիրված են որոշ ուղղութեան մարդիկ:

«Աշխատանքը» վարձատրելու է իր բոլոր մշտական աշխատակիցներին և գաւառական թղթակիցներին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Ռուսաստանի համար տարեկան	4 ռուբ. —	Արտասահմանի համար տարեկան	5 ռուբ. —
կէս տարին	2 » —	կէս տարին	2 » 50 կ.
ամիսը	— — 40 կ.	ամիսը	— — 50 »
հատով №-ը	— — 10 »	հատով №-ը	— — 15 »

Բաժանորդագինը կարելի է վճարել մաս-մաս. սկզբում 2 րուբլի, մայիսին՝ 1 ր. և սեպտեմբերին՝ 1 րուբլի.

1906 թւականի այն բաժանորդները, որոնք կը գրվեն մինչև այս տարվայ դեկտ. 20-ը, վճարելով տարեկան ամբողջ բաժանորդագինը միանուագ, կը ստանան իբրև պրեմիա «Իրաւական պետութիւն» յայտնի գիրքը—80 երեսից:

«Աշխատանքի» բաժանորդագինը ընդունվում է Թիֆլիսում խմբագրատան մէջ, իսկ քաղաքներում նաև բոլոր գրավաճառների մօտ:

Հասցէն՝ Тифлисъ, въ редакцію еженедѣльнаго журнала „Ашхаданкъ", Бебутовская ул. д. № 27: Արտասահմանից՝ Tiflis, rédaction de la revue «Aschchatank», Bebutovskaia 27.

Խմբագիր-հրատարակիչ՝ Աւոտ Արասխանեան
2—12
(Ե. Ռ.)

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.

Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15.